

**Ծնողներու  
Ուղեգիրք Յատուկ  
Կրթութեան  
Ծառայութեան  
Մասին**

**(Ներառեալ՝ Օրինական  
Իրաւունքներ եւ Նախագգուշական Միջոցներ)**

Լոս Անճելոսի Միացեալ Դպրոցական Շրջան  
Բարեփոխուած՝ Յունիս 2009-ին:

## ՆՐԱՄԱԿԱՆ

Լուս Անճեբուսի Միացեալ Դպրոցական Շրջանի ուսուցիչները, ղեկավարները և անձնակազմը կը հաւատան, որ բոլոր ուսանողները հաւասար արժանիքներ և արժանապատուութիւն ունին: Անոնք յանձնառու են առաւելագոյն չափով զարգացնել զանոնք համաձայն իրենց կարողութեան: Մեր առաքելութիւնն է առաւելագոյն ուսուցանել, որպէսզի իւրաքանչիւր ուսանող մասնակցի և օգտուի մեր բազմատեսակ ընկերութենէն:

Այս Ուղեգիրքը ձեզի անհրաժեշտ տեղեկութիւններ կ'ուտայ, որպէսզի ըմբռնէ՛ք յատուկ կրթութեան գործընթացը: Ան կը բացատրէ ձեր և ձեր երեխաներուն իրաւունքները, և զանոնք գործադրելու կերպերը՝ համաձայն Անկարողութիւն ունեցող Անհատներու Կրթութեան Դաշնակցային Հրամանագրին և Քալիֆորնիոյ Կրթական Օրէնքներուն:

Ուղեգիրքը, նոյնպէս, կը ծառայէ որպէս ձեր օրինական նախագոյնական միջոցներու ծանուցագիր (procedural safeguards), որ անպայման պէտք է յանձնուի ձեզի, համաձայն Դաշնակցային և Նահանգային օրէնքին: Օրինակ մը պիտի ստանաք տարին անգամ մը եւ.

- Երբ որ առաջին անգամ ձեր երեխան յանձնարարուի Յատուկ Կրթութեան գնահատման, կամ, երբ որ դուք ձեր երեխային համար գնահատութիւն պահանջէք:
- Երբ որ առաջին անգամ Նահանգին գանգատ ներկայացնէք, միայն միջնորդութիւն խնդրէք, եւ դպրոցական տարուան ընթացքին սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն պահանջէք (due process hearing):
- Երբ որ որոշեն կարգապահական միջոցառման պատճառաւ, փոփոխութիւն մտցնել տեղադրման մէջ:
- Երբ դուք մերժուի՞ք էք համաձայնութիւնը յատուկ կրթութեան շարունակական պայմանի համար և դրա հետ կապված ծառայութիւնը ձեր երեխային համար:
- Երբ որ կրկնօրինակը խնդրէք:

Կը խնդրենք որ Նիւթերու Ցանկին հետեւիք, որպէսզի ձեզի անհրաժեշտ տեղեկութիւնը գտնէք: Յոյսով ենք, որ այս ուղեգիրքը կ'օգնէ ձեզի, գործակցելու դպրոցին եւ դպրոցական շրջանին հետ, որպէսզի ձեր երեխան ստանայ յարմարագոյն կրթութիւնը:

## **ՅԱՒԵԼՆԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ**

Այս ուղեգիրքը կարդալ է ետք, եթե կը փափախիք յաւելեալ տեղեկութիւն ունենալ Յատուկ Կրթութեան մասին, կամ յաւելեալ հարցումներ ունիք ձեր երեխային կրթութեան վերաբերեալ, կրնաք դիմել ձեր երեխայի ուսուցիչին, դպրոցի տնօրէնին, և/կամ Յատուկ Կրթութեան Օժանդակ Միաւորի Վարիչին: Կարենալ կապ հաստատելու համար հետեւեցէք այս գրոյցի կետերի կողքին վրայ գրուած տեղեկութեան: Առաւել եւս՝ կրնաք հեռաձայնել.

### **Դպրոցական Շրջանի Գանգատի Պատասխանող Միաւորի/Ծնողական Տեղեկութեանց Ցանցի (CRU/PRN) (800) 933-8133**

Գանգատի Պատասխանող Միաւորի/Ծնողական Տեղեկութեան ցանցի (CRU/PRN) նպատակն է Դպրոցական Շրջանին պատեհութիւն տալ, լուծելու համար ծնողական գանգատները, որպէսզի ծնողները յաւելեալ արտաքին միջոցներու և իրենց սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան (due process hearing) դիմելու անհրաժեշտութիւնը չ'ունենան: Գանգատի Պատասխանող Միաւորը /Ծնողական Տեղեկութեան ցանցը, կը բացատրեն ծնողներուն իրենց երեխաներուն կրթութեան, Դպրոցական Շրջանի կանոնադրութիւններուն և գործելակերպերուն, Բարեփոխուած Համաձայնութեան Հրամանագրի և Դպրոցական Շրջանի Յատուկ Կրթութեան ծրագիրներուն մասին: Գանգատի Պատասխանող Միաւորը/Ծնողական Տեղեկութեան ցանցը՝ կը ծառայեն որպէս կապ, Տեղական Դպրոցական Շրջաններու և Օժանդակ Միաւորներու միջև, և ունին համացանցի (internet) գծով տեղեկատուութեան դրութիւն մը, որ կապուած է գրադարանի և անվճար հեռախօսի թիւի հետ: (հեռախօսի թիւը տեսնել վերը):

### **Համայնքի Խորհրդատու Վարչութիւն (CAC) (213) 241-6701**

Համայնքի Խորհրդատու Վարչութիւնը (CAC), համաձայն Բալիֆորնիոյ օրէնքին, կը պահպանէ դաստիարակներու և ծնողներու միջև փոխյարաբերութիւնը, և խորհուրդ կու տայ դպրոցական Շրջանի Տեղական Մրագրի Մարզի Յատուկ Կրթութեան (SELPA) Զարգացման, Տեղական Մրագրի և Տարեկան Մտաւորութիւններու և Պիտուէի Մրագիրներու կապակցութեամբ: Համայնքի Խորհրդատու Վարչութիւնը (CAC) ունի ամսական տեղեկատուական հանդիպում՝ Տեղական Դպրոցական Շրջաններու ծնողներու և անձնակազմի յատուկ: Այս ժողովները միջոց մըն են տեղեկութիւններ փոխանակելու համար: Համայնքի Խորհրդատու Վարչութիւնը կը մէկտեղուի ամսուան երկրորդ երկուշաբթին: Ժողովի թուականները կարելի է ստուգել հեռաձայնելով (213) 241-6701 թիւին:

### **Յատուկ Կրթութեան Բազմա-Մշակութային Խորհրդատու Վարչութիւն (SEMACE) (213) 241-6701**

Յատուկ Կրթութեան Բազմա-մշակութային Խորհրդատու Վարչութիւնը (SEMACE), կազմուեցաւ խորհուրդ տալու համար այն ընտանիքներուն և անոնց երեխաներուն, որոնք Յատուկ Կրթութեան Բաժանմունքի անկարողութիւն ունեցող ուսանողներ են, և որոնք, նոյնպէս, Անգլերէն Սորվողներ են: Յատուկ Կրթութեան Բազմա-մշակութային Խորհրդատու Վարչութիւնը շարունակական կերպով փոխյարաբերութիւն կը մշակէ եւ հանդիպումներ կը կազմակերպէ տեղական դպրոցներու դաստիարակներու և մասնակցող ծնողներու հետ: Յատուկ Կրթութեան Բազմա-մշակութային Խորհրդատու Վարչութիւնը իւրաքանչիւր ամսուան առաջին Չորեքշաբթին, կ'ունենայ իր ամսական տեղեկատուական ժողովները, Տեղական Դպրոցական Շրջաններու ծնողներու և պաշտօնէութեան համար: Ժողովի թուականները կարելի է ստուգել հեռաձայնելով (213) 241-6701 թիւին:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ՅԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

էջ 1

Արդեօ՞ք Ձեր երեխան Պեոֆ Ունի Յատուկ Կրթութեան Ծառայութիւններու:  
Որո՞նք են Յատուկ Կրթութեան Ծառայութիւնները:

Արդեօ՞ք Ծառայութիւններ կան երեք Տարեկանէն վար երեխաներու համար:  
Արդեօ՞ք երբ երեխայ մը Կընդունուի Յատուկ Կրթութեան Ծառայութիւններու:

## ՅԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

էջ 3

Առաջին ֆայլ. Գնահատութեան Յանձնարարական

Երկրորդ ֆայլ. Գնահատութիւն

Երրորդ ֆայլ. Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) Մշակում և կիրարկում:

Չորրորդ ֆայլ. Անհատականացուած Կրթութեան Ծրագրի Վերանայում

## ՅԱՒԵԼԵԱԼ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ՅԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

էջ 10

Իրաւունք ունի՞ք նախօրօք ստանալու Գրաւոր Ծանուցագիր:

Իրաւունք ունի՞ք ձեր հաւանութիւնը Տալու ձեր երեխայի գործընթացներու Մասնակցելուն

Իրաւունք ունի՞ք ջնջել հաւանութիւնը Յատուկ Կրթութեան Ծառայութիւններու և դրա կապով ծառայութիւնների շարունակական գործընթացը:

Իրաւունք ունի՞ք Տեսնելու ձեր երեխայի Կրթական Թղթածրարները:

Իրաւունք ունի՞ք Օրինական Նախագգուշական Միջոցներով Ձեր Տարակարծութիւնները Լուծելու (Procedural Safeguards) Ձեր երեխային Բարօրութեան Համար:

- Գպրոցական Շրջանի Անպաշտօն Բանավէճի Լուծում:
- Բալիֆորնիոյ Կրթական Նախարարութեան Միջնորդութիւն:
- Բալիֆորնիոյ Կրթական Նախարարութեան Մօտ Ձեր Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ունկնդրութիւն (Due Process Hearing), Միջնորդութեան Նախընտրութեամբ:
- Ի՞նչպէս Պահանջել Միջնորդութեամբ Ժողով, կամ Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ունկնդրութիւն (Due Process Hearing):

Իրաւունք ունի՞ք Գանգատ ներկայացնելու՝ Օգտագործելով Կանոնաւոր Գանգատի Գործելակերպեր:

- Տեղական Գանգատներ:
- Նահանգային Գանգատներ:

Պաշտպանելու՝ Ձեր երեխային Խտրականութեան և Այլազան Անհանգստացումներու դէմ ունեցած Պահպանուելու Իրաւունքը:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ ԱՌԱՆՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՏՕՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՆ, ՍԵՓԱԿԱՆ ԴՊՐՈՑԷ ՆԵՐՍ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՅԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

էջ 24

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

էջ 24

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

էջ 27

## ՅԱՃԱԽԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

էջ 28

## **ՅԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ**

### **Արդեօ՛ք Ձեր երեխան Պետք ունի Յատուկ Կրթութեան Ծառայութիւններու:**

Լուս Աննելուսի Միացեալ Դպրոցական Շրջանը յանձնառութիւն կը վերցնէ ծառայելու իւրաքանչիւր ուսանողի ուսումնական կարիքներուն: Իւրաքանչիւր Դպրոցական Շրջան աշխատանք մը ունի մէկտեղելու ծնողքը կամ խնամակալը, ուսանողը, և դպրոցի անձնակազմը դպրոցէն ներս, որպէսզի ուղղէ եւ լուծէ ուսանողին յաջողութեան արգելք հանդիսացող որևէ հարց: Այս Խումբը ճանչցուած է որպէս Առաջնորդող Վարչութիւն, Ուսանողի Քննարկման Խումբ, կամ Ուսանողի Յաջողութեան Օժանդակող Խումբ (SST): Այս խումբը պատասխանատու է բնորոշելու ուսանողին կարիքները և զարգացնելու ծրագիր մը, որ կարելի կը դարձնէ ուսանողին յաջողութիւնը:

Անկարողութիւններ ունեցող ուսանող մը իրաւունք ունի ուսումնական յարմարութիւններ կամ դասարանային փոփոխութիւններ ունենալու համաձայն 1973 թ. Վերականգնումի Որոշումի 504 Բաժնին: Համաձայն 504 Բաժնին, դուք կամ ձեր երեխային ուսուցիչը կրնաք դպրոցի տեսուչին ներկայացնել գրաւոր պահանջագիր մը որպէսզի գնահատեն ձեր երեխան, եւ որոշեն ուսումնական յարմարութիւններն ու փոփոխութիւնները: Ձեզ տեղեակ պիտի պահենք թէ ե՞րբ տեղի պիտի ունենայ գնահատութեան ժողովը, և կը փափաքինք, որ դուք մասնակցիք այդ ժողովին: Ապա, ձեր երեխային համար պիտի ստեղծենք ուսումնական յարմարութիւններ, կատարենք փոփոխութիւններ և ուսման օժանդակող կերպեր, ընդհանուր կրթութեան դասարանէն ներս: Բաժին 504-ի մասին, յաւելեալ տեղեկութիւն ստանալու համար, տեսնել Դպրոցական Շրջանի Բաժին 504 *և Անկարողութիւններ ունեցող Ուսանողներու գրքոյկը*:

Երբեմն սակայն, ուսանողները պէտք ունին Յատուկ Կրթութեան և անոր յարակից ծառայութիւններուն: Ուսանողին պաշտօնական գնահատութիւնը կատարելէն ետք, Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) խումբը կ'որոշէ Յատուկ Կրթութեան ընտրելիութիւնը: Ուսանողները կը ստանան Յատուկ Կրթութեան ծառայութիւններ երբ ընդհանուր կրթութեան ծրագրի բոլոր միջոցները ֆննարկուին:

### **Որո՞նք են Յատուկ Կրթութեան Ծառայութիւնները**

Յատուկ Կրթութեան ծառայութիւնները մասնայատուկ նախագծուած դասաւանդութիւններ են, որոնք կը հոգան ընտրուած, անկարողութիւն ունեցող ուսանողներու կրթական կարիքները համաձայն օրէնքի չափանիշներուն: Յատուկ Կրթութեան ծառայութիւնները կը սկսին երեք (3) տարեկանին և կը շարունակուին մինչև ձեր երեխան շրջանաւարտ կամ քսաներկու (22) տարեկան դառնայ:

## **Որո՞նք են Յարակից Մառայութիւնները**

Յարակից ծառայութիւններն են. փոխադրական, զարգացման, ուղղման և այլ օժանդակ ծառայութիւններ, որոնք անհրաժեշտ են Յատուկ Կրթութեան ծառայութիւններէն օգտուող երեխային համար:

## **Արդեօ՞ք Յատուկ Մառայութիւններ կան երեք Տարեկանէն վար երեխաներու համար:**

Քալիֆորնիոյ մէջ, երեք տարեկանէ (3 ) վար անկարողութիւններ ունեցող երեխաները կ'ընդունուին կանխահաս օժանդակ ծառայութիւններու՝ որոնք օգտակար կը դառնան անոնց զարգացման: Այն երեխաները, որոնք կ'ընդունուին նման օժանդակ ծառայութիւններու, պիտի ստանան դպրոցական Շրջանի ծառայութիւններ, եթէ միայն տեսողական, լսողական, կամ լուրջ ոսկրային վնասուածք ունին: Այդ տարիքի բոլոր երեխաները, որոնք ցոյց կու տան անման թերահմարտութիւն կամ վտանգաւոր պայմաններ, իրենց անման տկարութեան իբր հետեւանք, պիտի ստանան կանխահաս օժանդակ ծառայութիւններ իրենց տեղական Շրջանային Կեդրոնէն: Յաւելեալ տեղեկութեան համար հեռաձայնեցե՛ք Դպրոցական Շրջանի Մանկական և Նախադպրոցական Օժանդակ Մառայութեանց Գրասենեակը (213) 241-4713 թիւին:

## **Արդեօք ե՞րբ է որ երեխան Կ'ընդունուի Յատուկ Կրթութեան Մառայութիւններու**

Երեխայ մը կ'ընդունուի Յատուկ Կրթութեան ծառայութիւններու եթէ Անհատական Կրթութեան Ծրագրի (IEP) խումբը որոշէ, թէ երեխան անկարողութիւն ունի և պէտք ունի Յատուկ Կրթութեան ծառայութիւններու, կարենալ յառաջդիմելու համար իր ուսման մէջ:

Ընդունման պայմանները հետեւեալներն են.

- Օթիզմ-Ինֆնամփոփութիւն
- Խուլութիւն
- Խլութիւն-Կուրութիւն
- Յուզական- զգացական Խանգարում
- Հաստատուած Բժշկական Անկարողութիւն (3-5 տարեկան երեխաներու համար միայն)
- Ծանրականջ-Ծանր լսող
- Մտային Թերահմարտութիւն
- Բազմաթիւ Անկարողութիւններ
- Ոսկրային Խանգարում
- Այլ Առողջական Խանգարում
- Սորվելու Մասնայատուկ Անկարողութիւն
- Խօսակցութեան կամ Լեզուի Խանգարում
- Ուղեղի Վնաս դուրսէն ստացուած հարուածէն
- Տեսողական Խանգարում

## ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ֆատուկ կրթութեան գործընթացն է, որ կ'որոշէ ձեր երեխային ընդունուած կամ մերժուած ըլլալը Ֆատուկ Կրթութեան և յարակից ծառայութիւններու համար, և եթէ ընդունուած ըլլայ, արդեօք որո՞նք են ձեր երեխայի համար յարմար՝ Ֆատուկ Կրթութիւնը և յարակից ծառայութիւնները:

Ֆատուկ կրթութեան գործընթացի մէջ կան չորս հիմնական փայլեր.

1. **Գնահատութեան համար Յանձնարարական**
2. **Գնահատութիւն**
3. **Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) Զարգացում և Կիրարկում:**
4. **Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) Վերանայում:**

### ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ. Գնահատութեան համար Յանձնարարական

Ծնողք, խնամակալ, ուսուցիչ, և այլ դպրոցի և համայնքի պատկանող անդամներ, որոնք կը հաւատան թէ երեխայ մը պէտք ունի յատուկ կրթութեան ծառայութիւններու, կրնան պահանջել յատուկ կրթութեան գնահատութիւն մը, այդ երեխայի համար: Պահանջը պէտք է կատարուի գրաւոր և յանձնուի դպրոցի տնօրէնին: Ֆատուկ Կրթութեան Գնահատութեան Պահանջագիրը կրնա՞ ստանալ բոլոր դպրոցներու գրասենեակներէն: Երբ դպրոցը ստանայ գնահատութեան պահանջագիրը, դուք պիտի ստանա՞ք գրաւոր պատասխան մը տասնընիկ (15) օրուան մէջ, առանց հաշուելու (5) օրէ աւելի երկար տեւողութեամբ դպրոցական արձակուրդները: Եթէ դպրոցական Շրջանը որոշէ, որ գնահատութիւն մը կատարելը յարմար է, ապա պիտի ստանա՞ք երկու նամակներ, *Ֆատուկ Կրթութեան Գնահատութեան Ծանուցագիր մը*, և *Ֆատուկ Կրթութեան Գնահատութեան Ծրագիրը*: Եթէ Դպրոցական Շրջանը որոշէ թէ ձեր երեխայի գնահատութիւնը յարմար չէ, գրաւոր ծանուցագիր մը պիտի ստանա՞ք այս որոշումին մասին: Կրնա՞ք վերատեսութիւն պահանջել այս առումով որոշումին մասին օգտագործելով այս Ուղեգրի մէջի նկարագրուած անհամաձայնութիւններ լուծելու գործընթացներէն մէկը՝ «Ձեր երեխային Բարօրութեան Համար, Ձեր Տարակարծութիւններ Լուծելու Իրաւունքներն են Օրինական Նախագազակաւ Միջոցները օգտագործելով (Procedural Safeguards):»

*Ֆատուկ Կրթութեան Գնահատութեան Ծրագիրը* կը նկարագրէ գնահատութիւններու տեսակներն ու անոնց նպատակները, որոնք կ'օգտագործուին որոշելու համար ձեր երեխայի յատուկ կրթութեան ծառայութիւններ ստանալու ընտրելիութիւնը: Նախքան ձեր երեխայի գնահատութիւնը, հարկաւոր է որ ստորագրէ՞ք գնահատութեան ծրագիրը: Նախնական գնահատութիւնը չի կատարած պայման է, որ ձեր դպրոցը ունենայ ձեր գնահատութեան հաւանութեան հաստատագիրը: Նուազագոյնը տասնընիկ (15) օր ժամանակամիջոց ունիք, *Ֆատուկ Կրթութեան Գնահատութեան Ծրագիրը* ընդունելու և ստորագրելու համար: Դպրոցն այլ ձեր ստորագրած Գնահատութեան Ծրագրի պատասխանը ստանալէն ետք ունի վաթսու (60) օրեր, առանց հաշուելու (5) օրէն աւելի երկար արձակուրդի օրերը, որպէսզի ամբողջացնէ գնահատութիւնը և Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) ժողով մը գումարէ: Եթէ ձեր երեխան արձանագրուած է կամ կը ջանա՞ք արձանագրել ձեր երեխան հանրային դպրոց մը եւ կը մերժէ՞ք հաւանութիւն տալ կամ չէ՞ք ընդառաջէք սկզբնական գնահատութեան հաւանութեան պահանջին, Դպրոցական Շրջանը կրնայ ձեզմէ պահանջել սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն մը (due process hearing) կարենալ ստանալու համար Վարիչ Դատարարի մը հրահանգը, որպէսզի առանց ծնողական հաւանութեան գնահատութիւն կատարէ: Դպրոցական Շրջանը չի կրնար աննկատ մնալ ձեր

հաւանութիւն տալու անտարբերութեան դիմաց, եթէ ձեր երեխան արձանագրած էք անձնական դպրոց մը ձեր միջոցներով եւ կամ եթէ դուք որոշած էք տան մէջ դասաւանդել օրինական կերպով (home schooling):

Եթէ երեխան Նահանգի խնամակալութեան տակ կը գտնուի եւ ծնողին հետ չ'ապրիր, Դպրոցական Շրջանը ծնողին հաւանութեան պէտք չ'ունի սկզբնական գնահատութիւնը կատարելու համար, եթէ.

1. Հակառակ հաւանական ջանքերուն, Դպրոցական Շրջանը չի կրնայ գտնել երեխային ծնողին:
2. Համաձայն Նահանգի Օրէնքին, ծնողներու իրաւունքը վերջացած է:
3. Դատաւորը ծնողէն դուրս նշանակած է անձ մը որ կրթական որոշումներ կայացնելու իրաւունք ունի:

## **ԵՐԿՐՈՐԴ ՔԱՅԼ. Գնահատութիւն**

Գնահատութեան նպատակն է ձեր երեխային մասին տեղեկութիւններ փոխել, որոշելու համար ձեր երեխային անկարողութիւնը և անոր մատուցելու Յատուկ Կրթութեան ծառայութիւններ, անոր պէտքերը հոգալու համար: Գնահատութիւնները կը բովանդակեն հետեւեալները. անհատական ֆննութիւն, դպրոցին մէջ երեխայի դիտարկումներ, և երեխային հետ գործող դպրոցի անձնակազմին հետ հարցազրոյցներ, դպրոցի բոլոր ծրարներու, տեղեկագրութիւններու և աշխատանքի նմոյշներու վերաբնութիւն:

### **Գնահատութեան ընթացքին.**

- Ձեր երեխան պիտի գնահատեն բոլոր մարզերու մէջ, որոնք կը վերաբերին իր տարակուսելի անկարողութեան:
- Զանազան մասնագէտներէ կազմուած խումբ մը, որ ունի նուազագոյնը մէկ ուսուցիչ կամ այլ մասնագէտ մը, որոնք ծանօթ են ձեր երեխային տարակուսելի անկարողութեան, պիտի գնահատէ ձեր երեխան:
- Գնահատութիւնը պիտի կատարեն ձեր երեխային մայրենի լեզուով կամ այն լեզուով, որ ձեր երեխան կրնայ ակադեմական գիտելիքները արտայայտել, որպէսզի կարելի ըլլայ աւելի ճշգրիտ տեղեկութիւն ունենալ ձեր երեխային մասին: Անհրաժեշտութեան պարագային որակաւոր թարգմանիչի մը օժանդակութիւնը պիտի հայթայթուի:
- Գնահատութիւնը պիտի ընդգրկէ զանազան տեսակի ֆննութիւններ, որպէսզի չափեն ձեր երեխայի կարողութիւններն և տկարութիւնները: Գնահատողները փորձառու և որակաւոր մասնագէտներ են:
- Գնահատութիւնը պիտի յարմարի զգայարանային, ֆիզիքական կամ խօսակցական խնցարում ունեցող ուսանողներու կարողութիւններուն:
- Քննարկման և գնահատման նիւթերն ու գործելակերպերը չ'ունին ցեղային, մշակութային կամ սեռային խտրականութիւն:

### **Իրաւունք ունիք Ձեր երեխայի Ուսումնական Անկախ Գնահատութիւն Կատարելու:**

Իրաւունք ունիք, որքէ ատեն, ձեր Դպրոցական Շրջանէն դուրս պաշտօնավարող որակաւոր ֆննիչ գտնել, որ ձեր միջոցներով գնահատէ ձեր երեխան և արդիւնքները յայտնէ

Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) ժողովին: Կրնա՞մ նաեւ ձեր երեխային վերաբերող տեղեկագրութեան արդիւնքները ներկայացնել որպէս փաստ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան (due process hearing) ընթացքին:

Եթէ համաձայն չգտնուի՞ք Դպրոցական Շրջանի՝ ձեր երեխայի գնահատութեան, դուք նոյնպէս իրաւունք ունիք պահանջելու, որ Դպրոցական Շրջանը ձեր երեխայի անկախ ուսումնական գնահատութիւնը ինք կատարէ: Եթէ պահանջէք, որ անկախ ֆննչին ծախսը Դպրոցական Շրջանը վճարէ, Դպրոցական Շրջանը կամ՝ 1-կրնայ ընդունիլ գնահատութեան վճարումը, կամ՝ 2-կրնայ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն (due process hearing) մը պահանջել փաստելու համար, որ իր կատարած գնահատութիւնը արդարացի էր: Եթէ Դպրոցական Շրջանը օգտագործէ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացը եւ Դպրոցական Շրջանի ունկնդրող վարիչի վերջնական որոշումը այն ըլլայ, որ Դպրոցական Շրջանի գնահատութիւնը ճիշդ է,՝ դարձեալ իրաւունք ունիք յանդիմանաբար ուսումնական անկախ գնահատութեան մը, բայց այդ գնահատութեան ծախսերը դուք պիտի վճարէք:

Երբ Դպրոցական Շրջանը վճարէ ուսումնական անկախ գնահատութիւնը, պէտք է որ գնահատութեան վայրը և ֆննչին յատկութիւնները ըլլան՝ Դպրոցական Շրջանի կողմէ նախաձեռնած գնահատութեան օգտագործուած չափանիշով:

Ամէն անգամ որ Դպրոցական Շրջանը գնահատութիւն կատարէ եւ դուք համաձայն չգտնուիք անոր կատարած գնահատութեան, դուք իրաւունք ունիք մէկ անգամ ձեր երեխային գնահատութիւն կատարելու հանրային ծախսերով:

### **ԵՐՐՈՐԴ ՔԱՅԼ. Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) Զարգացում և կիրարկում:**

Ձեր երեխայի գնահատումէն ետք, Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) ժողով մը պիտի գումարուի: Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) ժողովի տեղն ու ժամանակը պէտք է յարմարին ձեզի և Դպրոցական Շրջանի ներկայացուցիչներուն: Այդ ժողովին, Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) խումբը պիտի ֆննէ գնահատութեան արդիւնքները և որոշէ եթէ ձեր երեխան Յատուկ Կրթութեան ծառայութիւններ պիտի ստանայ կամ ոչ: Ընդունուած ըլլալու պարագային Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) մը պիտի մշակուի ժողովի ընթացքին:

### **Հետեւեալ անձերը մաս կը կազմեն Անհատականացում Կրթութեան Մրագրի (IEP) խումբին**

- Դուք, իբրեւ երեխայի ծնողքը կամ խնամակալը, և /կամ ձեր ներկայացուցիչը.
- Դպրոցի տնօրէն մը.
- Յատուկ Կրթութեան ուսուցիչ մը կամ յատուկ կրթութիւն հայր-այրող մը.
- Ընդհանուր կրթութեան ուսուցիչ մը՝ եթէ ձեր երեխան կը մասնակցի ընդհանուր կրթութեան դասընթացքներու.
- Այլ անձնակազմի անդամներ, ինչպէս ձեր երեխան, գորս դուք կամ դպրոցը կը փափաքիք հրաւիրել. եւ
- Ձեր երեխան գնահատող և օգտագործուած գնահատութեան գործելակերպերու մասնագէտ և գնահատութեան արդիւնքներուն ծանօթ և ուսուցման առաջարկութիւններու արդիւնքները մեկնաբանող որակաւոր անձ մը: Այս անձը կրնայ վերոնշեալ նկարագրուած անձերէն մին ըլլալ:

- Ձեր գրաւոր հաւանութեամբ, Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) խումբի անդամներ կրնան կարգ մը պարագաներուն բացակայիլ:

**Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) Ժողովի Մասին Տեղեկ պիտի Ըլլա՞մ:**

Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) ժողովէն որոշ ժամանակ առաջ, դպրոցը պիտի տայ գրաւոր ծանուցագիր մը, որ կը կոչուի *Մանուցում Մեղոյքի և/Խնամակալի, Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) Ժողովին մասնակցելու համար*: Այս ծանուցագրին մէջ նշուած պիտի ըլլան. ժողովին թուականը, ժամանակը, և վայրը. ժողովին պատճառը եւ թէ ով ներկայ պիտի ըլլայ:

Դուք Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) խումբին կարելու մէկ անդամն էք: Եթէ չէք կրնար մասնակցիլ (IEP) ի ժողովին, կրնաք խնդրել դպրոցէն, որ փոխեն ժողովի թուականը: Դպրոցը նաև պիտի փորձէ դիւրացնել և ուրիշ միջոցներու պիտի դիմէ ապահովելու համար ձեր մասնակցութիւնը, օրինակի համար հեռաձայնային ժողով կամ տեսաժապաւէնային ժողով: Դպրոցը վստահ պէտք է ըլլայ, որ դուք կ'ըմբռնէք, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ ժողովի ընթացքին: Օրինակ, դպրոցը ձեզի պիտի հայթայթէ թարգմանիչ մը եթէ լսողութեան անկարողութիւն ունիք և կամ, եթէ անգլերէնը ձեր մայրենի լեզուն չէ: Բացակայութեան պարագային, կրնաք թոյլ տալ, որ Դպրոցական Շրջանը, Անհատականացուած Կրթութեան Ծրագրի (IEP) ժողովը գումարէ առանց ձեր ներկայութեան:

**Ի՞նչ է Անհատականացուած Կրթութեան Ծրագիրը (IEP)**

Անհատականացուած Կրթութեան Ծրագիրը (IEP) գրաւոր փաստաթուղթ մըն է, որ IEP-ի խումբը մշակած և համաձայնած ու որոշած է.

- Ձեր երեխային այժմու կրթական եւ աշխատանքային կատարողութիւններն և կրթական կարիքները:
- Ձեր երեխային կատարելագործելիք տարեկան նպատակակէտերը և ձգտումները:
- Ձեր երեխային անհրաժեշտ և ստանալիք յատուկ կրթութիւնը և յարակից ծառայութիւնները, ուսումնական յարմարութիւնները և փոփոխութիւնները:
- Անհատականացուած Փոխանցման Ծրագիր մը (ITP), որ ծրագրած են օգնելու համար ձեր երեխային, որ տեղափոխուի դպրոցէն ետք արտադպրոցական գործունէութիւններուն, երբ ձեր երեխան 14 տարեկանը թեւակոխէ: Յաւելեալ ծանօթութիւններու համար տեսնել Դպրոցական Շրջանին գրքոյկը, որ կը կոչուի Անհատականացուած Փոխանցման Ծրագիրը ITP- ին և ԴՈՒՔ:
- Յարմար տեղադրում մը, նուազագոյն տարբերութեամբ գատորոշուող ուսումնական միջավայր, (Least Restrictive Environment) ձեր երեխային համար:
- Եթէ ձեր երեխան պէտք ունի փոխադրական ծառայութիւններու:
- Թէ՛ ի՞նչպէս պիտի գնահատուի ձեր երեխայի յառաջդիմութիւնը և տեղեկագրուի ձեզի:

IEP-ի (Անհատականացուած Կրթութեան Ծրագրի) ժողովին պիտի ստանաք IEP-ի կրկնօրինակը: Եթէ ներկայ չի գտնուիք IEP-ի ժողովին, IEP-ին պիտի բացատրուի և անոր կրկնօրինակը պիտի դրկուի ձեզի: Դուք իրաւունք ունիք համաձայն կամ անհամաձայն գտնուելու IEP-ի որևէ

որոշումին: Դպրոցը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք նախատեսված են նախապես նրա ձեռնարկման ստանդարտները բարձրագույն կրթության մատչելիությունը ապահովելու նպատակով: Զբոսայգիների համապատասխանությանը, IEP-ի կրկնօրինակը պիտի տանք ձեռքով, որը հնարավորություն է տալիս նրանք, որ կրկնօրինակը համար տեսնել Դպրոցական Միջավայրի մեջ, որ կրկնօրինակը IEP-ին և ԴՈՒՎ:

**Ի՞նչ կը նշանակէ Տեղադրում, Նուազագոյն Տարբերութեամբ Զատորոշուող Ուսումնական Միջավայրի մէջ (Least Restrictive Environment)**

IEP-ի կազմը կ'որոշէ տեղադրման տեսակն կամ կրթական միջավայրը, որոնք յարմար են ձեռնարկման համարժեշտ կրթութիւն հայթայթելու համար: Յարմար տեղադրման որոշման պարագային, IEP-ի կազմը պէտք է առաւելագոյն հնարավորութեամբ ապահովէ ձեռնարկման համար կրթութիւն, անկարողութիւն չունեցողներուն հետ: Այդ յատուկ դասարանները, մասնաւոր դպրոցը, կամ այլ դասարանէն դուրս կարգադրութիւնները տեղի կունենան այն պարագային միայն երբ անկարողութեան բնոյթն ու լրջութիւնը այն աստիճանի են, որ յաւելեալ օգնութիւններ և ծառայութիւնները չեն արդիւնաւորուիր բաւարար չափով, ընդհանուր կրթութեան դասարանէն ներս:

Տեղադրութիւններու Ցանկը Կ'ընդգրկէ Նուազագոյնէն Առաւելագոյն Տարբերութեամբ

§ Ընդհանուր կրթութեան դպրոցներ

- Ընդհանուր կրթութեան դասարանը ուսումնական յարմարութիւններով և փոփոխութիւններով:
- Ընդհանուր կրթութեան դասարանը յաւելեալ օգնութիւններով և օժանդակութիւններով:
- Ընդհանուր կրթութեան դասարանը յարակից ծառայութիւններով:
- Ընդհանուր կրթութեան դասարանը Յատուկ Կրթութեան մասնագէտի ծառայութիւններով:
- Ընդհանուր կրթութեան դասարանը և յատուկ օրուայ ծրագիրը:
- Յատուկ օրուայ ծրագիր:

§ Յատուկ դպրոցներ կամ կեդրոններ

- Յատուկ օրուայ ծրագիր

§ Ոչ-հանրային դպրոցներ

- Կրկնակի արձանագրութիւն (Հանրային և ոչ-հանրային դպրոցներ)
- Ոչ-հանրային դպրոց կամ կեդրոն

§ Դպրոց կամ հիւանդանոց

- Ուսուցում տունը կամ հիւանդանոցը

§ Բնակարանային

- Նահանգի հատուկ դպրոց
- Ոչ-հանրային դպրոց կամ կեդրոն

Եթէ ձեռնարկման անկարողութիւններ չունի, իր ուսումը պիտի ստանայ յաճախած դպրոցէն, բացի այն պարագային, երբ Անհատականացուած Կրթութեան Մրագրի IEP-ի կազմը որոշէ ուրիշ վայրի մը անհրաժեշտութիւնը՝ բաւարարելու համար ձեռնարկման համար ձեռնարկման պէտքերը, որոնք որոշուած են IEP-ի մէջ: Այդ վայրը կարելի եղածին չափ մօտ պիտի ըլլայ ձեռնարկման:

Նահանգի հատուկ դպրոցները տալիս են ծառայություններ աշակերտներին, որոնք խուլ են, վատ են լսում, կույր են, ունեն տեսողութեան կորուստ, կամ խուլ-կույր են այս երեք տեղերում: Քալիֆորնիայի դպրոցները խուլ երեխաների համար Fremont-ում և Riversiade-ում և Քալիֆորնիայի դպրոցները կույր երեխաների համար Fremont-ում: Բնակարանային և օրուայ դպրոցի ծրագրերը առաջարկվում են աշակերտներին մանկությունից 21 տարեկանը թե՛ Նահանգի դպրոցները խուլ երեխաների համար և հինգ տարեկանից մինչև 21 Քալիֆորնիայի դպրոցները կույր երեխաների համար: Նահանգի հատուկ դպրոցները նույնպես առաջարկում են գնահատման ծառայություններ և տեխնիկան օգնություն: Հավելյալ տեղեկություն համար Նահանգի հատուկ դպրոցների մասին, կխնդրվի նայել California Department of Education Web site, at <http://www.cde.ca.gov/sp/ss/> կամ հարցնել տեղեկություն ձեր երեխայի IEP խմբի անդամներից:

### **Ե՞րբ կը հայթայթուին փոխադրական ծառայությունները**

Անհատականացում կրթութեան Մրագրի (IEP) –ի խումբը կ'որոշէ եթէ ձեր երեխան պետք ունի դէպի դպրոց փոխադրութեան և կամ մասնակցելու արտադպրոցական գործունէություններու: Սովորաբար փոխադրութեան պետք կ'ըլլայ եթէ յատուկ կրթութեան տեղադրումը, ծառայությունները, կամ գործունէությունները իր բնական շրջանին մէջ չ'ըլլան: Նաեւ, փոխադրութեան պետք կը գգացուի անձնական պատճառներով, ինչպէս առողջական, ընկերային դատողութեան, կամ ձեր երեխայի ապահովութիւնը վտանգող հաղորդակցութեան դժուարութեան պատճառաւ: IEP-ի խումբը, նույնպէս կ'որոշէ, թէ ինչ կարգի յարմարություններ կամ փոփոխություններ պետք են ձեր երեխային փոխադրութիւնը ապահով դարձնելու համար:

Փոխադրութիւնը ծառայութիւն մըն է, բնոր կը հիմնադրենք որոշ կարիքներ ունեցող երեխաներու համար և ոչ թէ ձեր կամ երեխային հանդիման համաձայն: Ան, նույնպէս չենք մատուցեր եթէ ձեր երեխան տեղադրէք դպրոց մը առանց Դպրոցական Շրջանի հասանութեան:

IEP –ի խումբը, որոշել էտ փոխադրութեան անհրաժեշտութիւնը, ձեզ տեղեկ պիտի պահէ աշխատանքային 5 օրուայ ընթացքին, յայտնելու համար թէ ու՞րկէ և ե՞րբ պիտի տանին և վերադարձնեն ձեր երեխան: Քանի մը օր կ'ընայ առէլ տեւել եթէ մասնագիտական գործիքներ կամ կարգադրություններ նախատեսած ըլլան: Յանելեալ փոխադրական ծառայություններու տեղեկություն համար հեռաձայնել 1 (800) LA-BUSES կամ 1 (800) 522-8787 թիւին:

### **Ինչ կ'ըլլայ եթէ երեխաս Medi-Cal-ի ընդունուի:**

Medi-Cal-ի մասին հետեւեալ տեղեկութիւնը կ'ուսանք Medi-Cal-ի ընդունում անկարողութիւն ունեցող ուսանողներու ծնողներուն: Համաձայն Անկարողութիւններ Ունեցող Անհատներու կրթական Հրամանագրի (IDEA) կանոնադրություններուն, Լոս Անջելոսի Միացեալ Դպրոցական Շրջանը ծնողներուն կը հայթայէ երեխաներու IEP –ի մէջ մասնաւորում ծառայությունները, անվճար կերպով: Սակայն Դաշնակցային կառավարութեան Medicaid-ի ծրագիրը կը յատուցէ ԼԱՄԴՇ-ի այդ ծառայություններու ծախսերը, ինչ որ հնարաւորութիւն կ'ուստայ բոլոր ԼԱՄԴՇ-ի ուսանողներուն առողջապահութեան վերաբերեալ ծառայություններ մատուցելու:

Առողջապահական ծառայություններու ծախսերը բարձր են: Դաշնակցային կրթական հիմնադրամը կը վճարէ այդ ծախսերուն մէկ մասը միայն: 1986-ին, Քոնկրէսը արտօնեց դպրոցներուն, որ կարգ մը առողջապահութեան հետ կապուած ծառայություններու ծախսերը Medicaid-ին վճարել տան: (Մանօթ. Քալիֆորնիոյ մէջ Medicaid-ը Medi-Cal կը կոչուի): Շատ մը երեխաներ և ընտանիքներ, որոնք ուրիշ առողջապահական ապահովագրութիւն չունին, կ'օգտուին Medi-Cal-ի դպրոցներու մէջ մատուցած ծառայություններէն եւ օժանդակութիւններէն: Անկարողութիւններ ունեող ուսանողներու պարագային, դպրոցին մէջ հաստատուած առողջապահական խնամքը գործնական և օգտակար ձեւէ է առողջապահական խնամք մատուցելու: Այս մէկը կը խնայէ ծնողներուն այս տեսակի ծառայություններուն համար անհրաժեշտ ժամանակ և դարմանատուներ ու հիւանդանոցներ փնտնելու տաղտուկը:

Ներկայիս Medi-Cal-ի կողմէ յատուցուած ծառայութիւնները կ'ընդգրկեն որոշ առողջապահական ծառայութիւններ՝ Դպրոցական Շրջանի բոլոր ուսանողներուն համար, ինչպէս նաև, մասնայատուկ ծառայութիւններ՝ անկարողութիւն ունեցող ուսանողներուն համար: Անկարողութիւն ունեցող ուսանողներուն համար առողջապահութեան վերաբերեալ ծառայութիւնները կ'ընդգրկեն գնահատութիւն և դարմանում (ներ), որոնք բնորոշուած են ուսանողին Անհատականացուած Կրթական Մրագրին IEP -ին մէջ, ներառեալ, լսնաբանական, խորհրդատուական, հիւանդապահական ծառայութիւններ, մասնագիտական դարմանում, ֆիզիքական դարմանում, խօսակցական դարմանում, և փոխադրամիջոց, որ կապուած են այս ծառայութիւններուն հետ: Medi-Cal-ը ունի նոյն բարձր մասնագիտական չափանիշները դպրոցին մէջ հաստատուած մատուցողներուն համար, ինչպէս որ անոնք կը մատուցեն հիւանդանոցներու, վերականգնումի կեդրոններու, և այլ վայրերու մէջ:

Medi-Cal-ի կողմէ ընդունուած ուսանողներու ծնողները արտօնութիւն կ'ունան ԼԱՄԴՇ-ին, որ պահանջէ Medi-Cal-ի կողմէ ֆինանսաւորուած ծառայութիւններուն հատուցումը, երբ ծնող մը Յատուկ Կրթութեան Գնահատութեան Մրագրին կամ IEP -ին հաւանութիւնը ստորագրէ: Պահանջներու յանձնարարութիւնը կը համեմատի գնահատութիւններու համար ստորագրուած արտօնութիւններուն եւ կամ ուսանողի IEP -ի մէջ ծնողաց կողմէ ստորագրուած Medi-Cal-ի կողմէ ֆինանսաւորուած ծառայութիւններուն, գնահատութեան արտօնութիւններուն և/կամ յանձնարարութեան կերպին վրայ: Որպէսզի հատուցում ստանայ, ԼԱՄԴՇ-ը պէտք է թողարկէ ուսանողի վերաբերեալ արձանագրութիւնները, բժշկական տեղեկագրութիւնը և/կամ այլ տեղեկութիւններ: Դպրոցի մէջ - հաստատուած Medi-Cal-ի հատուցումը չի վնասէր այլ հաստատութիւններէ ներս երեխայի ստացած Medi-Cal-ի նպաստներուն: Քալիֆորնիայ մէջ, անկարողութիւններ ունեցող ուսանողներուն համար Medi-Cal-ի Սահմանափակում չկայ: ԼԱՄԴՇ-ի բնաւ վերաման տոմս չի դրկեր ընտանեկան անձնական ապահովագրական ընկերութեան, երեխայի IEP -ի մէջ բնորոշած առողջապահական խնամքի ծառայութիւններուն համար: Դպրոցական Շրջանը կառչած կը մնայ IDEA -ին և կը պահանջէ, որ անկարողութիւն ունեցող ուսանողներուն հայրայրեն անվճար և յարմար հանրային կրթութիւն (FAPE) . Medi-Cal-ի կողմէ ընդունուած ուսանողներու ծնողները կրնան եւ արտօնութիւն չտալ ԼԱՄԴՇ-ին, որ հատուցում ստանայ իրենց երեխային մատուցուած ծառայութիւններուն համար, պահանջելով ԼԱՄԴՇ-ի Medi-Cal -ի գրասենեակէն Ծնողական Medi-Cal -ի վճարման տոմսի Արտօնութիւն Չտալու պաշտօնաթուղթը: Յաւելեալ տեղեկութեան համար հեռաձայնել 213-241-0558 թիւին:

Երեխաները Medi-Cal-ի կ'ընդունուին հիմնուելով զանազան ազդակներու վրայ, որոնք կը ներառեն ընտանիքի եկամուտը և անկարողութիւնը: Այն ծնողները, որոնք յանելեալ տեղեկութիւններ կ'ուզեն ունենալ Medi-Cal-ի մասին, կրնան հեռաձայնել անվճար LAUSD CHAMP Օգնութեան ծնողական առողջապահական խնամք Օգնութեան Հեռախօսի թիւին 1-866-742-2273

## **ԶՈՐՐՈՐԴ ՔԱՅԼ. IEP Վերանայում**

Եթէ ձեր երեխան Յատուկ Կրթութեան ծառայութիւններ կը ստանայ, իր Անհատականացուած Կրթութեան Մրագրին պիտի վերանայիմք Անհատականացուած Կրթութեան Մրագրի ժողովի մը ընթացքին, նուազագոյնը տարին անգամ մը, որոշելու համար, թէ անոր կարիքները լաւապէս բաւարարուած են կամ ոչ: Նաև՝ երեք տարին անգամ մը, ձեր երեխան պիտի վերագնահատենք ըստ անհրաժեշտութեան:

Եթէ մտահոգութիւններ ունիք, ձեր երեխայի կրթական կարիքները բաւարարուած չըլլալուն համար, դուք կամ դպրոցի անձնակազմը կրնաք պահանջել վերամտութիւն մը կամ IEP -ի ժողով մը վերանայելու համար IEP -ին, որեւէ ժամանակ տարուան ընթացքին: IEP -ի ժողով մը կրնաք պահանջել գրաւոր խնդրանք ներկայացնելով դպրոցին: Ձեր պահանջաբար ստանալէն ետք, ժողովը պէտք է գումարեն երեսուն (30) օրուայ մէջ, առանց հաշուելու հինգ (5) օրէ աւելի

երկար տեւողութեամբ դպրոցական արձակուրդները. կրնա՞ գնահատութիւն մը պահանջել գրաւոր խնդրանք ներկայացնելով դպրոց, կամ ամբողջացնելով Պահանջագիր մը *Յատուկ կրթութեան Գնահատութեան համար*, որ կրնա՞ ստանալ որևէ Դպրոցական Շրջանէ: Դպրոցը պէտք է ձեր արտօնութիւնը ունենայ նախֆան ձեր երեխային գնահատելը: Վերագնահատութիւնները տարին մէկ անգամէն աւելի պիտի չի կատարուին, բացի այն պարագային երբ Դպրոցական Շրջանը անհրաժեշտ նկատէ:

## **ՅԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՅԱԻՆԵՆԱԼ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐ**

Նախորդ էջերուն մէջ նշուած իրաւունքներուն վրայ, առաւել եւս ունի՞ք հետեւեալ իրաւունքները.

- Իրաւունք՝ Գրաւոր Ծանուցագիր ստանալու.
- Իրաւունք՝ Համաձայն Ըլլալու Երեխային Հետ Աւորջուած Գործունէութիւններուն.
- Իրաւունք ունի՞ք ջնջել հաւանութիւնը Յատուկ կրթութեան Ծառայութիւններու և դրա կապված Ծառայութիւնների շարունակական գործընթացը:
- Իրաւունք՝ Տեսնելու Ձեր Երեխային Կրթական Թղթածրարները.
- Իրաւունք՝ Օրինական Նախագգուշական Միջոցներու (Procedural Safeguards)
- Իրաւունք՝ Գանգատ մը ներկայացնելու

### ***Իրաւունք ունի՞ք Գրաւոր Ծանուցագիր Ստանալու***

Դպրոցական Շրջանը ձեզի պիտի տայ գրաւոր ծանուցագիր մը նախֆան ձեր երեխային գնահատութիւն առաջարկելը կամ մերժելը: Նաև, նախօրոք ձեզի պիտի տայ գրաւոր ծանուցագիր մը, եթէ Դպրոցական Շրջանը առաջարկէ փոխել կամ մերժէ փոխել ձեր երեխայի ստուգումը, կրթական տեղադրումը կամ Յատուկ կրթութեան ծառայութիւնները:

Ծանուցագիրը պիտի ընդգրկէ.

- Դպրոցական Շրջանին առաջարկած կամ մերժած գործողութեան նկարագրութիւնը:
- Բացատրութիւն մը, թէ ինչու՞ այդ գործողութիւնը առաջարկած կամ մերժած են:
- Որեւէ այլ ֆննարկուած նախընտրութիւններու նկարագրութիւնը, և այդ նախընտրութիւնները չ'ընդունելուն պատճառները:
- Տեղեկութեան նկարագրութիւնը կ'օգտագործեն որպէս առաջարկուած կամ մերժուած գործողութեան հիմք:
- Որեւէ ուրիշ ազդակներու նկարագրութիւնը, որոնք կապ ունին առաջարկուած կամ մերժուած գործողութեան հետ:
- Հաստատագիր մը, որ կը հաստատէ, թէ դուք պաշտպանուած էք այս Ուղեգրքին մէջ նկարագրուած օրինական նախագգուշական միջոցներով:
- Արդեօք ի՞նչպէս կրնա՞ տեղեկութիւն ստանալ այս Ուղեգրքէն օրինակ մը ունենալու մասին (զիրէր կը նկարագրէ յատուկ կրթութեան օրինական նախագգուշական միջոցներու մասին):

Նաև, ձեզ տեղեակ պիտի պահենք ձեր երեխայի կրթական ծրագրին կամ տեղադրումին փոփոխության մասին: Այդ փոփոխությունը վերջ կը գտնէ աւելի քան տասը (10) դպրոցական օրեր ետ: Անիկա կը ներառէ ձեր երեխայի դպրոցէն հեռացումը՝ կախակայման կամ արտաբնական պատճառով:

Իրաւանջիւր ազդարարագիր պիտի գրուի բոլորին կողմէ հասկնալի լեզուով մը, և պիտի հայթայթուի ձեր մայրենի լեզուով, կամ հաղորդակցութեան այլ եղանակով: Եթէ կարելի չեղաւ ձեր մայրենի լեզուով կամ հաղորդակցութեան տարբեր եղանակով գրել ազդարարագիրը, այդ պարագային ան պիտի թարգմանենք բերանացի կամ այլ միջոցներով կամ այլ հաղորդակցութեան կերպով:

### ***Իրաւունք ունիք Համաձայն Ըլլալու Ձեր Երեխայի՝ Գործունէութիւններուն Մասնակցութեան.***

Դուք պէտք է ձեր գրաւոր համաձայնութիւնը յայտնէք նախքան ձեր երեխային առաջին Յատուկ Կրթութեան գնահատութեան սկսիլը և նախքան Դպրոցական Շրջանի՝ ձեր երեխային Յատուկ Կրթութեան ծառայութիւններ մատուցելը: Եթէ մերժէք սկզբնական ծառայութիւններու մատուցման համաձայնագիրը, Դպրոցական Շրջանը չի կրնար անտեսել ձեր անհամաձայնութիւնը և անիկա օրէնքի խախտում չի նկատուիր, եթէ ան թերանայ իր ծառայութիւններու մատուցման մէջ:

Վերագնահատութեան պարագային, Դպրոցական Շրջանը ձեր հաւանութիւնը ապահովելու համար իր կարելիին պիտի ընէ: Եթէ չ'ընդառաջէք, Դպրոցական Շրջանը կրնայ շարունակել վերագնահատութիւնը առանց ձեր արտօնութեան: Եթէ մերժէք ձեր հաւանութիւնը տալ, Դպրոցական Շրջանը - պայման չէ- սակայն կրնայ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն (due process hearing) մը պահանջել որպէսզի դատարարի կողմէ արտօնութիւն ունենայ, առանց ձեռնարկ հաւանութեան, երեխային գնահատութիւնը կատարելու : Բայց, Դպրոցական Շրջանը չի կրնար անտեսել ձեր անհամաձայնութիւնը, եթէ ձեր երեխան արձանագրած էք ձեր ծախսերով, անձնական դպրոց մը, կամ ձեր երեխան իր ուսումը կը ստանայ տունը օրինական կերպով (home schooling):

Այլ պարագաներուն նաև, Դպրոցական Շրջանը պիտի փորձէ ունենալ ձեր համաձայնութիւնը: Օրինակի համար. ձեր երեխայի կրթական թղթածրարները ձեր ներկայացուցչին յանձնելէն առաջ, Դպրոցական Շրջանը պէտք է ունենայ ձեր համաձայնագիրը: Այս պարագային, Դպրոցական Շրջանը պիտի ցուցակագրէ այն բոլորին անունները, որոնց պիտի արտօնէ թղթածրարներու պարունակութեան թողարկումը: Դպրոցական Շրջանը պիտի խնդրէ ձեր համաձայնութիւնը միայն օրէնքի տակ գտնուող գործունէութիւններուն համար:

Երբ ձեր համաձայնութիւնը տաք, այդ կը նշանակէ, թէ.

- Դուք ձեր մայրենի լեզուով կամ հաղորդակցութեան այլ եղանակով բոլոր առընչութիւն ունեցող տեղեկութիւններուն լրիւ ծանօթ էք :
- Դուք կ'ըմբռնէք պահանջուածը և համամիտ էք, որ Դպրոցական Շրջանը կատարէ աշխատանքը, որուն համար ձեր համաձայնութիւնը խնդրած է:
- Դուք կ'ըմբռնէք, թէ ձեր համաձայնութիւնը կամաւոր է, և թէ կրնաք փոխել ձեր միտքը որևէ ժամանակ:

Դպրոցական Շրջանը ձեր երեխային վերաբերող տուեալները գնահատելու կամ վերագնահատելու համար պէտք է ունի ձեր համաձայնութեան, և կամ երբ ձեր երեխան վնասներու յանձնելու ըլլայ ինչպէս միւս բոլոր երեխաները բացի այն պարագայէն երբ բոլոր ծնողներու հաւանութիւնը պահանջուի:

Ձեր դպրոցը չի կրնար ձեր համաձայնութեան մերժումը, օգտագործել ծառայութեան մը, կամ գործունէութեան մը համար, ձեզի կամ ձեր երեխային որևէ ծառայութիւն, նպաստ, կամ գործունէութիւն մերժելով:

Իրաւունք ունիք ջնջել հաւանութիւնը Յատուկ կրթութեան Ծառայութիւններու և դրա կապված Ծառայութիւնների շարունակական գործընթացը:

Որևէ մի ժամանակ, հատուկ կրթութեան և դրա կապված ծառայութիւնների սկզբնական գործընթացից հետո, դուք իրաւունք ունիք ջնջել համաձայնութիւնը գրավոր հատուկ կրթութեան և դրա կապված ծառայութիւնները ձեր երեխայի համար: Եթէ ջնջեք համաձայնութիւնը, Դպրոցական Շրջանը չի կրնար շարունակել տալով հատուկ կրթութիւն և դրա կապված ծառայութիւններ ձեր երեխայի համար: Դպրոցական Շրջանը պէտք է տա գրավոր լուր նախքան հատուկ կրթութեան և դրա կապված ծառայութիւնների սկզբնական գործընթացի դադարեցնելը:

### ***Իրաւունք Ունիք Ձեր Երեխայի Կրթական Թղթածրարները տեսնելու***

Կրթական թղթածրարները կարելու տեղեկութեան աղբիւր կը բովանդակեն ձեր երեխայի մասին: Անոնք կ'ընդգրկեն, իբրև անկարողութիւն ունեցող ուսանող ճշդորոշման մասին տեղեկութիւն, գնահատութեան արդիւնքներ և կրթական տեղադրում և ծառայութիւններ: Այս թղթածրարները գաղտնի կը մնան:

Դուք հետեւեալ իրաւունքները ունիք Ձեր Երեխայի Դպրոցական Թղթածրարներուն կապակցութեամբ.

- Ստուգել և վերանայիլ ձեր երեխայի թղթածրարին յաջորդող հինգ (5) աշխատանքային օրերուն, ձեր պահանջքն անմիջապէս ետք, և կատարել նախքան ձեր երեխայի Անհատականացուած կրթութեան Ծրագրի (IEP) ժողովը, կամ, որեւէ ունկնդրութիւնը ձեր երեխայի բնորոշման վերաբերեալ, գնահատութիւնը, կրթական տեղադրումը կամ Յատուկ կրթութեան ծառայութիւնները: Դպրոցական Շրջանը նիւթական պարտաւորութեան տակ պիտի չդնէ ձեզ՝ ձեր երեխայի մասին տեղեկութիւն հաւաքելուն համար:
- Ձեզի պիտի տան ձեր երեխայի թղթածրարներուն կրկնօրինակը ձեր գրաւոր կամ բերանացի պահանջքին յաջորդող հինգ (5) օրերու ընթացքին: Դպրոցական Շրջանը կրնայ նիւթական պարտաւորութեան տակ դնել ձեզ այդ թղթածրարներուն վերարտադրութեան ծախսերուն համար, բայց եթէ այս ծախսը արգելք հանդիսանայ ձեզի ձեր կրկնօրինակները ստանալու իրաւունքին, ապա անոնք ձրիարար պիտի վերարտադրուին ձեզի համար:
- Արձանագրութիւններու մասին մեկնաբանութիւններ եւ բացատրութիւններ ստանալու համար խնդրանք ներկայացնել:
- Ձեր ներկայացուցիչը պէտք է այդ արձանագրութիւնները ստուգէ և վերանայի:
- Տեղեկ ըլլաք դպրոցին օգտագործած պատրաստած, պահած կրթական թղթածրարներու տեսակին և վայրերուն մասին:

Այս իրաւունքները բոլոր հանրային ընկերութիւններուն ունեցած արձանագրութիւններուն համար են, եւ որոնք կը հալթալթեն կրթական ծառայութիւններ անկարողութիւններ ունեցող ուսանողներուն և անոնց կ'ուսուցանեն, նահանգի հիւանդանոցներուն կամ կրթական կեդրոններուն և երիտասարդական և չափահասներու հաստատութիւններուն մէջ:

Որովհետև անոնք գաղտնի ուսանողական արձանագրութիւններ են, ձեր երեխայի IEP-ին և ուրիշ կրթական փաստաթուղթերը պիտի տանք միայն անոնց, որոնք Դաշնակցային կրթական Իրաւունքներու և Անձնակազմութեան Օրէնքի (FERPA) կողմէ արտօնութիւն ունին, ինչպէս այն անձնաւորութիւնը, որ պատասխանատու է ձեր երեխայի կրթական ծրագիրը կիրարկելու և այն անձերը և ընկերութիւնները, որոնք պէտք ունին այս տեղեկութեան, հետեւելու համար Դաշնակցային և Նահանգային օրէնքներուն և կանոններուն: Ձեր համաձայնութիւնը պէտք է տամ նախնան ձեր երեխայի արձանագրութիւններուն բացայայտումը որևէ անձի կամ ընկերութեան, որ արտօնուած չէ FERPA-ի կողմէ:

Դպրոցական Շրջանը և այլ հանրային ընկերութիւններ անհատներու մասին արձանագրութիւն կը պահեն, միայն ծնողներն և արտօնեալ Դպրոցական Շրջանի պաշտօնեաներն են որ կրնան ունենալ ուսանողի մը կրթական արձանագրութիւնները: Այս արձանագրութիւնները կ'ընդգրկեն այն անհատներուն անունները որոնք կարդացած են տեղեկութիւնը, անոնց տեղեկութիւնը ձեռք բերած թուականը, և այդ արձանագրութիւնները օգտագործելու համար իրենց արտօնութեան նպատակը:

Իրրև ծնողք կամ խնամակալ, դուք իրաւունք ունիք ֆննելու և վերանայելու ձեր երեխային թղթածրարներուն, բացի այն պարագայէն երբ Դպրոցական Շրջանը տարբեր տեղեկութիւն ստացած ըլլայ:

Եթէ որևէ կրթական թղթածրար պարունակէ ձեր երեխայէն տարբեր այլ երեխայի կամ երեխաներու մասին տեղեկութիւն, իրաւունք ունիք ստուգելու և վերանայելու միայն այն տեղեկութիւնը, որ կը վերաբերի ձեր երեխայի մասին, կամ տեղեկանալու այդ մասնայատուկ տեղեկութեան մասին:

Դպրոցական Շրջանը հինգ (5) տարի կը պահէ Յատուկ կրթական արձանագրութիւնները, ուսանողին՝ դպրոցի ծրագիրը ամբողջացնելէն ետք: Որմէ ետք զանոնք կը փնսցնեն:

Եթէ կը կարծէք թէ ձեր երեխայի թղթածրարները կը պարունակեն սխալ տեղեկութիւն, կամ բերի են կամ կը խախտեն ձեր երեխային իրաւունքները՝ կրնաք պահանջել, որ Դպրոցական Շրջանը փոխէ տեղեկութիւնը: Դպրոցական Շրջանը պիտի ընդառաջէ կամ մերժէ որոշ ժամանակամիջոցի մը ընթացքին, ձեր պահանջքը ստանալէն ետք: Եթէ Դպրոցական Շրջանը մերժէ փոփոխութեան ենթարկել տեղեկութիւնը, դուք ծանուցագրով մը պիտի իմանաք այդ որոշումին և ձեր ունկնդրութեան իրաւունքին մասին:

Համաձայն ձեր պահանջքին, Դպրոցական Շրջանը ձեզի ունկնդրութեան պատեհութիւն պիտի ընծայէ նշոյնը համար ձեր երեխայի կրթական արձանագրութիւնները: Եթէ ունկնդրութեան որոշումը ի նպաստ ձեզի է, Դպրոցական Շրջանը պիտի բարեփոխէ տեղեկութիւնը և տեղեկ պիտի պահէ ձեզ գրաւոր կերպով:

Եթէ ունկնդրութեան որոշումը ի նպաստ ձեզի չ'ըլլայ, դուք իրաւունք պիտի ունենաք ձեր երեխայի թղթածրարին կցելու ձեր գրաւոր առարկութիւնները: Այս գրութիւնը մաս պիտի կազմէ ձեր երեխայի դպրոցական թղթածրարներուն, այնքան ատեն որ խնդրոյ առարկայ տեղեկութիւնը սրբագրեն կամ վերցնեն: Եթէ երբէք ձեր երեխայի թղթածրարները կամ խնդրոյ առարկայ տեղեկութիւնը բացայայտեն որևէ մէկուն, ձեր գրաւոր առարկութիւնը նոյնպէս պիտի բացայայտուի:

***Դուք Իրաւունք ունիք Ձեր երեխայի Բարօրութեան համար Ձեր Տարակարծութիւնները Լուծելու Օրինական Նախագգուշական Միջոցներով (Procedural Safeguards)***

Միշտ նախընտրելի են ունի Դպրոցական Շրջանի անձնակազմին հետ ֆինանսավորումները, ինչպես նաև համար ամեն տարակարծությունները: Նաև, իրաւունք ունի օգտագործելու հետեւեալ բանալէնի լուծման գործելակերպերը, լուծելու համար ձեռնարկարժուէրները:

## **Անպաշտօն Բանալէնի Լուծում (IDR)**

Անպաշտօն Բանալէնի Լուծումը կամ **IDR**-ը, կամաւոր բանալէնը Լուծելու գործընթաց մըն է, որ կը տրամադրուի ծնողներուն: **IDR**-ը գործընթաց մըն է, որ նախագծուած է աւելի արագ, նուազ պաշտօնական և նուազ ընդդիմադիր կերպով լուծելու, քան միջնորդութեամբ եւ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեամբ լուծման գործելակերպերը: **IDR**-ի Անպաշտօն Բանալէնի Լուծման գործընթացին, ծնողները կը ներկայացնեն իրենց հարցերը եւ մտահոգութիւնները և Դպրոցական Շրջանը կը փորձէ անմիջապէս լուծել յայտնաբերուած հարցերը:

Եթէ կուզէ գործածել IDR –ի գործընթացը, լուծելու համար ձեռնարկարժուէրները Անհատականացուած Կրթութեան Մրագրի (IEP) վերաբերեալ անհամաձայնութիւնները, ստուգանքները մըն դրէ 10-րդ էջի (ծնողի հաւանութեան էջին) վրայ գտնուող տուփի IEP-ին այն մասին մէջ, ուր կը հաստատէ թէ Մնողը / Ուսանողը (18-21) կը փափաքի Լուծումը Անհատական Միացեալ Դպրոցական Շրջանի Անպաշտօն Բանալէնի Լուծման Գործընթացի դիմել: Ապա IEP-ի վարիչ/ներկայացուցիչ անձին հետ ժողով մը գումարեցէ՛ որպէսզի ձեռնարկարժուէրները փոխարինուին:

IEP-ի վարիչ/ներկայացուցիչն հետ ժողովը պէտք է որ տեղի ունենայ, IEP-ի խումբին ժողովին աշխատանքային մէկ օրուայ ընթացքին, եթէ հնարաւոր ըլլայ: Ժողովի ընթացքին դուք IEP-ի վարիչ/ներկայացուցիչն հետ միասնաբար պիտի լրացնէ՛ք “Անպաշտօն Բանալէնի Լուծման պահանջ մը” (IDR), ինչ կը վերաբերի Անհատականացուած Կրթութեան Մրագրին (IEP)-ի հարցերու-IDR, Դիմումագիր Ա”:

IDR Ա դիմումագիրը լրացնելէ ետք զանկէ կը յանձնէ Դպրոցական Շրջանի Յատուկ Կրթութեան Բաժանմունքին: Աշխատանքային մի քանի օրուայ ընթացքին Դպրոցական Շրջանի վարիչը ձեռնարկարժուէրները պիտի հետաձայնէ եւ պիտի ջանայ լուծել ձեռնարկարժուէրները:

Ձեզի պիտի տանք IDR-ի գործընթացի ընթացքին կատարուած լուծման գործունէութեան փաստաթուղթերը: Եթէ համաձայնութեան մըն չանցնէ IDR-ի գործընթացի ընթացքին, համաձայնութեան պայմանները կարելի է գրաւոր արձանագրել/կամ (IEP)-ի խումբի ժողով մը կը կարելի է գումարել, համաձայնութեան պայմանները ներառելու համար: Եթէ համաձայնութեան չի յանգիւք, կրնաք նախաձեռնել սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան (due process) գործընթացին:

## **Միջնորդութիւն Միայն**

“Միջնորդութիւն Միայն” կամաւոր կերպով բանալէն մըն լուծելու գործընթաց մըն է, ուր չէ՛զոք միջնորդ մըն կ’օգնէ ձեզի և Դպրոցական Շրջանին, ֆինանսավորում և ջանալով լուծել ձեռնարկարժուէրները: Միջնորդները Դպրոցական Շրջանին պաշտօնեաները չեն եւ անհամաձայնութեան մէջ ոչ մէկ անհատական շահ ունին: Միջնորդները կ’ընտրուին Նահանգի կողմէ, անկողմակալ գեների վրայ և ծանօթ են յատուկ կրթութեան և յարակից ծառայութիւններու օրէնքներուն և կանոններուն: “Միջնորդութիւն Միայն” գործընթացը կ’ընդգրկէ միջնորդական ժողով մըն, ուր դուք ներկայ պիտի գտնուիք, նշանակեալ միջնորդը, և Դպրոցական Շրջանի ներկայացուցիչը, որ որոշում կ’ապացնելու իշխանութիւն ունի:

Ունկնդրություններու Գրասենյակը ("OAH") Նահանգային ընկերություն մըն է, որ կը ղեկավարէ Միջնորդութեամբ Միայն և սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրությունները due process hearing-ները: Պահանջելու համար Միջնորդութեամբ Միայն կերպը, պէտք է ամբողջացնէ՝ "Միջնորդություն Միայն կերպի Պահանջագիրը" և փոստով կամ հեռախօսով ղրկէ՛ք հետեւեալ հասցէին.

Office of Administrative Hearings,  
Attention. Special Education Division  
2349 Gateway Oaks Drive, Suite 200  
Sacramento, CA 95833  
Phone. (916) 263-0880,  
FAX: (916) 263-0890

Նամակին կրկնօրինակը պէտք է նամակով կամ Հեռագրով ղրկէ՛ք նոյնպէս հետեւեալ հասցէին.

Due Process Department  
Division of Special Education  
Los Angeles Unified School District  
333 South Beaudry Avenue, 17th Floor  
Los Angeles, CA 90017  
FAX: (213) 241-8917

Կրնա՛ք Միջնորդություն Միայն Պահանջագրի Օրինակը ստանալ ձեր երեխայի դպրոցէն կամ համակարգիչի միջոցաւ, հետեւեալ Կայքէջի վրայ [www.oah.dgs.ca.gov](http://www.oah.dgs.ca.gov).

Ձեր միջնորդություն միայն խնդրագիրը ստանալէ ետք, OAH պիտի նշանակէ միջնորդութեան ժողով մը: Փաստաբանները եւ վճարովի պաշտպանները չեն կրնար ներկայ ըլլալ Միջնորդութեամբ Միայն գործընթացի, միջնորդութեան ժողովին: Միջնորդութեան ժողովին, միջնորդը պիտի օգնէ ձեզի և Դպրոցական Շրջանին իրարու տեսակէտներուն ծանօթանալու: Միջնորդը նոյնպէս պիտի ներկայացնէ նախընտրանքներ ձեզի եւ Դպրոցական Շրջանին, որ մտածէ՛ք: Այն ինչ որ կը ֆինարկուի միջնորդութեան ժողովին, գաղտնի կը մնայ և չի կրնար օգտագործուիլ որևէ մէկ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան ունկնդրութեան due process-ի կամ խղճագրական գործընթացի ընթացքին: Եթէ դուք և Դպրոցական Շրջանը համաձայնութեան մը յանգի՛ք, հաւանութիւնը պիտի գրանցուի համաձայնագրով մը: Գրանցուած Համաձայնագիրը պիտի տանք ձեզի և Դպրոցական Շրջանի ներկայացուցչին որպէսզի հաստատէ՛ք և ստորագրէ՛ք: Անգամ մը որ համաձայնութիւնը ստորագրուի Նահանգի և Իշխանակցային օրէնքի տակ կրնայ գործադրութեան դրուիլ:

Միջնորդութեամբ Միայն Կերպ Պահանջելը ձեզի չ'արգիլէր որ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան ունկնդրություն պահանջէ՛ք: Եթէ Միջնորդութեամբ Միայն կերպը ձեր անհամաձայնութեան լուծում չի տայ, կամ դուք և կամ Դպրոցական Շրջանը, կրնա՛ք նախաձեռնել սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի կերպերուն:

### ***Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ունկնդրություն (Due Process Hearing)***

Սահմանադրական Իրաւունքներու պաշտպանութեան գործընթացները բանավէճի լուծման միջոցներ են, որ պայման է Անկարողություն Ունեցող Անհատներու Հրամանագրի համաձայն (IDEA), ծնողներուն և դպրոցական շրջաններուն տրամադրել: Դուք կամ Դպրոցական Շրջանը կրնա՛ք Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի մօտ -Due Process - գանգատ ներկայացնել որևէ հարցի մասին, որ ձեր երեխայի համար կատարուած

առաջարկութեան կամ մերժման, որոշելու նախաձեռնութեան կամ փոփոխութեան գնահատութեան կամ կրթական տեղադրման կամ անվճար յարմար հանրային կրթութեան (Fapec) մատուցման կը վերաբերի: Գործելակերպերը կը սկսին բողոքագիր ներկայացնելով եւ կ'ընդգրկեն լուծումի ժամանակաշրջան մը, որ անկողմնակալ ունկնդրող պատասխանատուի մը ներկայութեան պարտադիր լուծման հանգելու ժողով կը գումարեն, նախընտրական միջնորդութիւն, և սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան ունկնդրութիւն կը խնդրեն: Դպրոցական Շրջանը կը գումարէ լուծման ժողովը: Ունկնդրութեան Դրասենեակը (OAH) կը վարէ նախընտրական միջնորդութիւնը և սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան ունկնդրութիւնը: Պայման չէ որ այս բոլոր սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացներու հետեւին լուծման յանգելու համար: Սահմանադրական Իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի գանգատը կարելի է լուծել երկու կողմերու միասնական համաձայնութեամբ գործելակերպի որեւէ մէկ հանգրուանին:

1. Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Գանգատի Յանձնումը

Նախաձեռնելու համար Սահմանադրական Իրաւունքներու պաշտպանութեան գործընթացներուն, դուք պարտաւոր էք ներկայացնելու գրաւոր սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացին ծանօթագրութիւն մը, որ կը բովանդակէ հետեւեալ տեղեկութիւնը. 1) երեխային անունը, 2 ) երեխային բնակութեան հասցէն, և կամ եթէ երեխան տուն չունի, տալ հասցէն այն անձին, որուն հետ կարելի է կապ հաստատել 3) երեխային յանձնարձ դպրոցին անունը, 4) խնդրին բնութագրութիւնը, (5) և խնդրին լուծման համար այդ ընթացքին կատարուած առաջարկութիւնը: Սահմանադրական Իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի գանգատներու ժամկէտը երկու տարի է: Այս կը նշանակէ թէ գանգատներու ազգարարագիրը ամենէն շատ երկու տարի առաջ տեղի ունեցած յախտումներ պէտք է ընգրկէ: Այս ժամանակամիջոցը պիտի կիրարկուի բացի եթէ ի վիճակի չէք ձեր գանգատը աւելի կանուխ ներկայացնելու, որովհետեւ Դպրոցական Շրջանը դիտումնաւոր սխալ ներկայացուցած է, նշելով թէ նշուած գանգատներուն լուծումը կատարուած է, եւ կամ Դպրոցական Շրջանը ձեզի տուած չէ այն տեղեկութիւնը, որ անպայման պէտք էր տուած ըլլար:

(OAH)-ը մշակած է սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի գանգատի ազգարարագրի նախատիպ մը: Կրնաք կրկնօրինակ մը պահանջել ձեր երեխային յանձնարձ դպրոցէն, կամ կրկնօրինակ մը ունենալ կայքէջի միջոցաւ. [www.oah.dgs.ca.gov](http://www.oah.dgs.ca.gov).

Գանգատի պաշտօնաթուղթը ամբողջացնելէ ետք, յանձնեցէք զայն ձեր երեխայի յանձնարձ դպրոցին, փոստով կամ հեռատիպով, կրկնօրինակներ դրկելով հետեւեալ հասցէներուն.

Due Process Department  
Division of Special Education  
Los Angeles Unified School District  
333 South Beaudry Avenue, 17th Floor  
Los Angeles, CA 90017  
FAX: (213) 241-8917

and to

Office Of Administrative Hearings  
Special Education Division  
2349 Gateway Oaks Drive, Suite 200  
Sacramento, CA 95833  
Phone: (916) 263-0880  
FAX: (916) 263-0890

Որպեսզի գանգատի գործընթացը ընթանայ, պետք է անոր կցել վերը նկարագրուած տեղեկութիւնները: Գանգատը ստանալէն ետք այն կողմը, որ գանգատը ստացած է պետք է տասըհինգ օրերու ընթացքին, (օր. Դպրոցական Շրջանը եթէ անոր դէմ է գանգատը) գանգատին մասին առարկութիւնները ներկայացնէ, թէ գանգատի ազդարարագիրը ըստ օրէնքի պետք էղած տեղեկութիւնը չի պարունակէր: Եթէ առարկութիւն մը ներկայացնէ, ունկնդրութեան գրասենեակը պետք է 5 օրերու ընթացքին պատասխանէ, թէ բաւարարար քանակութեամբ տեղեկութիւն կայ ազդարարագրի մէջ եւ իր որոշումը, երկու կողմերուն տեղեկացնէ գրաւոր կերպով:

Կրնա՞ք փոփոխութիւններ մտցնել ձեր գանգատի ազդարարագրին եթէ. 1- Դպրոցական Շրջանը գրաւոր կերպով հաստատէ փոփոխութիւնները և առիթ տայ լուծելու գանգատը Սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ճշմարտացի ճշմարտութիւնը մէջ, կամ 2- ունկնդրութեան պաշտօնեան ձեզի արտօնէ փոխելու ձեր գանգատը ամէնէն ուշ հինգ օրուայ մէջ նախքան Սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացին ճշմարտութիւնը սկսելը: Ունկնդրութիւնը սկսելէն ետք, չէ՛ք կրնա՞ք փոխել ձեր գանգատի ազդարարագիրը:

Եթէ փոփոխութիւններ մտցնէ՞ք ձեր գանգատին մէջ, ձեզ պիտի պահանջեն որ ներկայացնէ՞ք բարեփոխուած գանգատի ազդարարագիրը: Անգամ մը որ ներկայացնէ՞ք բարեփոխուած ազդարարագիրը, լուծման ժամկէտը և լուծման հանգրուանը (որ նկարագրուած են յաջորդ բաժնի մէջ) պիտի վերսկսին դարձեալ:

## 2. Լուծման Շրջանը

2004-ի Անկարողութիւն Ունեցող Անհատներու Կրթութեան Բարելաւման Հրամանագիրը (IDEA 2004) կը բոլորէ 30 օրուայ լուծման շրջան մը, նախքան ճշմարտութիւնը -ի ունկնդրութեան սկսելը: Այս լուծման շրջանը ծնողներուն և դպրոցներուն կու տայ լայն հնարաւորութիւններ, որ դրական եւ շինիչ կերպեր օգտագործելով անոնք, լուծեն իրենց անհամաձայնութիւնները: Ինչ կը վերաբերի լուծման ժամանակաշրջանին IDEA 2004 կը ներառէ հետեւեալ գործելակերպերը.

Եթէ Դպրոցական Շրջանը IEP--ի տարակարծութեան կապակցութեամբ նախապէս գրաւոր ազդարարագիր դրկած չէ ձեզի, Դպրոցական Շրջանը պետք է որ ձեր ճշմարտութիւնը գանգատը ստանալէն ետք 10 օրերու ընթացքին գրաւոր կերպով պատասխանէ ձեր ազդարարագրին: Դպրոցական Շրջանի պատասխանը այլ բաներու կողմին նաեւ պիտի ներառէ, բացատրութիւն մը թէ ինչու՞ համար Դպրոցական Շրջանը ազդարարագրին մէջ յառաջացած առաջարկութիւնները կատարած է կամ մերժած է, նկատի ունեցած նախընտրութիւններու քննարկումը, և որոշում առնելու համար Դպրոցական Շրջանի օգտագործած տեղեկութեան նկարագրութիւնը: Պատասխանը նաեւ կ'ընդգրկէ լուծման առաջարկութիւն մը, կամ գործունէութեան առաջարկ մը. (օրինակի համար, վերստին գումարել Անհատականացուած Կրթութեան Ծրագրի IEP-խումբի ժողով մը), ուղղելու համար բողոքագրին մէջ պարգուած հարցերը:

Դպրոցական Շրջանը բողոքագիրը ստանալէն ետք 15 օրուայ ընթացքին, ժողով մը պիտի գումարէ լուծելու համար գանգատները բացի այն պարագային երբ դուք և Դպրոցական Շրջանը գրաւոր կերպով համաձայն գտնուի՞ք ժողով չգումարել կամ համաձայն ըլլա՞ք միջնորդութեան գործընթացը օգտագործել փոխարէնը: Լուծման շրջանի նպատակակէտն է քննարկել ձեր Due Process-ի գանգատները և Դպրոցական Շրջանին առիթ ընձայել որպէսզի բանալէ՛ն լուծէ: Լուծման շրջանի ընթացքին պետք է մասնակցի գործին հետ առընտրութիւն ունեցող անձ մը կամ գործին հետ առընտրութիւն ունեցող IEP-ի անդամներու խումբ մը, Դպրոցական Շրջանի ներկայացուցիչ մը, որ որոշում առնելու իշխանութիւն ունի, և դուք: Կրնայ ըլլա՞յ որ Դպրոցական Շրջանի փաստաբանը ներկայ չ'ըլլայ եթէ ձեր փաստաբանը ներկայ ըլլայ:

Եթե լուծումի մը յանգեցաւ այդ ժողովը, կողմերը պիտի գործադրեն օրինական համաձայնագրի որոշումը, որ դատարանի կողմէ պարտադրուած է իրենց: Որեւէ կողմ կրնայ ջնջել համաձայնագիրը ստորագրութեան թուականի յաջորդող աշխատանքային երեք օրերու ընթացքին:

Եթե ձեռք գտնուող ձեռք փափաքած լուծումը չ'ստանայ ձեռք Դպրոցական Շրջանի ազդարարագիրը ստատակէն ետք, 30 օրուայ ընթացքին, սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն տեղի պիտի ունենայ եւ բոլոր սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան վերաբերեալ ժամկէտները այդ օրէն պիտի սկսին:

Բացի այն պարագաներուն, ուր դուք և Դպրոցական Շրջանը գրաւոր կերպով համաձայնութիւն գոյացնէք, լուծման շրջանը չ'ունենալ, եթէ դուք չի մասնակցիք լուծման ժողովին, ձեռք լուծման գործընթացի ժամկէտը եւ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան ժամկէտները պիտի երկարաձգուին: Առաւել եւս, եթէ չի մասնակցիք Դպրոցական Շրջանի լուծման շրջանին, հակառակ Դպրոցական Շրջանի ծրագրած բազմաթիւ ջանքերուն, Դպրոցական Շրջանը կրնայ պահանջել, որ OAH չեղեալ նկատէ ձեռք սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան վերաբերեալ Due Process-ի գանգատը:

Եթէ Դպրոցական Շրջանը ձեռք ազդարարագիրը ստանալէն ետք 15 օրացոյցային օրերուն չի հրաւիրէ լուծման ժողովի, կամ չի մասնակցի ժողովին, կրնաք պահանջել, որ OAH-ը, հրահանգէ, որ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան ժամկէտը սկսի նախքան 30 օրուան լուծման շրջանի աւարտը:

### **3. Կամաւոր Միջնորդութեան**

Նախքան սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւնը, կողմերը կրնան մասնակցիլ միջնորդութեան ժողովին: Այս նախա-ունկնդրութեան միջնորդութեան ժողովը, նման է "Միջնորդութեամբ Միայն" ժողովի գործընթացին միայն այն տարբերութեամբ, որ փաստաբաններն ու վճարովի պաշտպանները կրնան մասնակցիլ այս նախա-ունկնդրութեան ժողովին: Երբ նախա-ունկնդրութեան միջնորդութեան ժողով խնդրէ OAH-ը պիտի նշանակէ միջնորդ մը եւ թուականն ու ժամը ծրագրէ: Միջնորդի դերն է ձեռք եւ դպրոցական Շրջանին օգնել որպէսզի լուծէ ձեռք երեխային IEP-ի վերաբերեալ անհամաձայնութիւնը: Եթէ ժողովին համաձայնութեան հանգիստ, համաձայնութեան պայմանները համաձայնագրի վրայ պիտի գրուի եւ ի օրու պիտի դառնան այն պարագային, երբ դուք եւ Դպրոցական Շրջանի ներկայացուցիչը ստորագրեն: Եթէ միջնորդութեան ժողովին համաձայնութեան չի հանգիստ, հարցը պիտի շարունակուի եւ երթայ ունկնդրութեան:

### **4. Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Ունկնդրութիւն (Due Process Hearing)**

Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ունկնդրութիւնը (due process hearing) աւելի պաշտօնական լուծման գործընթաց մըն է: OAH-ի փաստաբան մը կամ նշանակուած ունկնդրող մը կը գլխաւորէ գանձիկա: Զեռակերպութեամբ՝ անիկա կը նմանի դատավարութեան: Փաստեր կը ներկայացնեն և վկաներ կը վկայեն և տեղի կ'ունենայ կրկնակի հարցաքննութիւն: Ունկնդրող պատասխանատուները կրնան հարցաքննել վկաները, թոյլ կու տան որ մասնագէտները իրարու հետ փնտրակումներ կատարեն, այցելեն տեղադրական վայրեր, կանչեն վկաներ և պահանջեն անկախ գնահատութիւններ: Ունկնդրող պատասխանատուին դերն է որոշել եթէ երբէք ձեռք երեխան կը ստանայ կամ ստացած է անվճար և յարմար հանրային կրթութիւն (FAPE) Նահանգային և Դաշնակցային օրէնքի համաձայն:

Գործնական խախտումները չեն կրնար պատճառ դառնալ որ անվճար և յարմար հանրային կրթություն (FAPE)-ը զլանան: Գործնական խախտում մը ենթադրելու հարցով, ունկնդրության պաշտոնեան կրնայ երեւան հանել, որ ձեր երեխան FAPE ստացած չէ միմիայն եթէ. (1) Գործնական խախտումը արգելք հանդիսացած է ձեր երեխային FAPE- համար. (2) ստանալու իրաւունքը մասնաւորաբար արգելք հանդիսացած է ձեր երեխայի IEP-ի գործընթացի մասնակցութեան պատեհութեան համար, կամ (3) պատճառած է կրթական շահերու գրկանման:

Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ունկնդրութիւնը (due process hearing) տեղի պէտք է ունենայ եւ գրաւոր կերպով որոշումը պէտք է դրկուի բոլոր կողմերուն 30 օրուան լուծման ժամկէտը լրանալէ ետք 45 օրերու ընթացքին, բացի այն պարագային երբ, որ Ունկնդրող պաշտոնեան կողմերէն որեւէ մէկու խնդրանքին ընդառաջելով երկարած գէ ժամկէտը: Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ունկնդրութեան (due process hearing) դուք եւ Դպրոցական Շրջանը իրաւունք ունիք.

- Ունենալու՝ արդար ու անկողմնակալ վարչական ունկնդրութիւն մը, յատուկ կրթութեան և վարչական ունկնդրութիւններու օրէնքներուն ծանօթ անձի մը ներկայութեան:
- Իմանալու՝ այլ մասնակցող կողմերու հարցերուն և առաջարկուած որոշումներու մասին, ունկնդրութեանէն նուազագոյնը օրացոյցային տասը (10) օրեր առաջ:
- Ստանալու՝ միւս խումբի ներկայացուցիչ փաստաբանին ծանօթագրութիւնը, ունկնդրութեանէն նուազագոյնը տասը (10) օր առաջ:
- Ստանալու՝ միւս կողմի բոլոր փաստաթուղթերը, ներառեալ, գնահատութիւններու և անոնց աւարտած բուսականներու, յանձնարարականներու և վկաներու ցանկի կրկնօրինակները, որոնց մէջ նշուած ըլլան անոնց ընդհանուր վկայութեան մարզը, ունկնդրութեանէն նուազագոյնը աշխատանքային հինգ (5) օր առաջ (եթէ հիշող ժամանակին փաստաթուղթերը չի յանձնէք, փաստաթուղթերը պիտի չ'ընդունուին):
- Ունենալու և ստանալու՝ թելադրութիւն փաստաբանի մը, և/կամ անձնաւորութիւններու կողմէ, որոնք անկարողութիւններ ունեցող երեխաներու մասին տեղեակ են:
- Ներկայացնելու՝ ապացոյց, գրաւոր փաստարկութիւններ, և բերանացի առարկութիւններ:
- Հակառակելու հակառակ կողմի փաստաբանին հարցաճննութիւններուն, և պահանջելու՝ որ ներկայ գտնուին վկաները:
- Ստանալու՝ գրաւոր, կամ ելեփորոնիկ իրողութիւններու արդիւնքներն ու որոշումներու կրկնօրինակը:

Առաւել եւս իրաւունք ունիք ունկնդրութիւնները փակ կամ բաց կատարելու հանրութեան առջեւ, որոշելու ձեր երեխային ներկայութիւնը այդ ունկնդրութեան, եւ բարգձմանիչ պահանջելու:

Ունկնդրող պատասխանատուներու որոշումները բոլոր կողմերուն համար պարտաւորիչ են, բայց կրնան վերատեսութեան ենթարկուիլ Նահանգի կամ Դաշնակցային Դատարանի մէջ առնուած վերջին որոշումէն ետք իննսուն (90) օրուայ ընթացքին: Եթէ ունկնդրութեան վարիչին որոշումը ի նպաստ ձեզի ըլլայ, դուք պիտի ստանաք փաստաբանի ծախսերու արդարացի

հատուցում, Դպրոցական Շրջանի կամ դատարանի համաձայնութեամբ: Եթե ի նպաստ ձեռքի չ'ըլլայ, դատարանը փաստաբանի ծախսերը պիտի տայ Դպրոցական Շրջանին, որպէսզի ան տայ ձեր հակառակորդ փաստաբանին եթէ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի գանգատը նկատուի անտեղի, անհիշող, եւ անհիմն: Դատարանը կրնայ նաև շնորհել Դպրոցական Շրջանին իր փաստաբանական ծախսերը, որոնք ձեռքի դէմ կատարած է կամ ձեր փաստաբանին դէմ, եթէ սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի գանգատը ներկայացնեն եւ պաշտպանեն որեւէ անպատկար նկատարով, ինչպէս, ներդացնել, դիտումնաւոր կերպով ուշացնել, կամ անպէտք դատ բանալու ծախսեր աւելցնել:

Սահմանադրական Իրաւունքներու Պաշտպանութեան Գործընթացի Ընթացիին Ուսանողին Տեղադրումը.

Բացի կարգ մը փոխընդհանուր կրթական տեղադրումներէ, (տեսնել այս ուղեգրքի մէջ “Տեղափոխութեան Կարգապահութեան Մասին”) տարակարծութեան լուծման միջոցին, երբ կը կատարուի սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն (due process hearing), նեղաբաշխ՝ յետագայ որեւէ ունկնդրութեան վերատեսուութիւն, ձեր երեխան պիտի մնայ իր ներկայ տեղադրութեան մէջ, և պիտի շարունակէ ստանալ իր բոլոր ծառայութիւնները, որ կ'ստանար արդէն, բացի այն պարագային, որ դուք և Դպրոցական Շրջանը համաձայնիք տարքեր կարգադրութեան մը շուրջ: Եթէ տարակարծութիւնը վերաբերի նախկին հանրային դպրոցի ընդունման դիմումագրին, ձեր երեխան, ձեր հաւանութեամբ, պիտի տեղադրուի հանրային դպրոցի ծրագրի մէջ, մինչեւ առնուած բոլոր քայլերու աւարտը:

Եթէ գանգատը ընդգրկէ ուսանող մը, որ IDEA -ի Բաժին Գ ծառայութիւններ ստանալէն (0-3 տարեկան) կ'անձնի Բաժին Բ ծառայութիւններու (3-22 տարեկան) եւ այլեւս չի կրնար Բաժին Գ-ի ծառայութիւններ ստանալ որովհետեւ երեխան 3 տարեկան դարձած է, Դպրոցական Շրջանը պէտք չէ տայ Բաժին Գ-ի ծառայութիւնները, այն ինչ որ երեխան արդէն իսկ կը ստանար: Սակայն, սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան ընթացքին, Դպրոցական Շրջանը պէտք է մատուցէ Անհատականացում կրթութեան Ծրագրի մէջ նշուած յատուկ կրթութիւնն եւ յարակից ծառայութիւնները, այն բոլորին համար որ Դպրոցական Շրջանը տարակարծութիւն չ'ունի:

**Իրաւունք Ունիք Գանգատ Ներկայացնելու**

Կանոնաւոր Գանգատի Գործելակերպերը միջոցներ են, որոնք կ'օգտագործեն յատուկ կրթութեան օրէնքի խախտումներ լուծելու համար: Տեղական գանգատներու գործելակերպեր կան, որոնք կը մնան Դպրոցական Շրջանի մօտ, և կան Գործավարութիւններ, նահանգային գանգատներու գործելակերպեր, որոնք կը մնան Քալիֆորնիոյ կրթական Նախարարութեան մօտ:

**Տեղական Գանգատներ**

Եթէ կը կարծէք թէ Դպրոցական Շրջանը խախտած է Դաշնակցային կամ Նահանգային օրէնքները, կամ յատուկ կրթութեան ծրագիրներու կարգն ու կանոնը՝ կրնաք գանգատ ներկայացնել հետեւեալ հասցէին.

Specialty Funded Programs, Compliance and Technical Support Branch  
333 S. Beaudry, 16th Floor  
Los Angeles, CA 90017

Եթէ կը փափաքիք, որ այս գրասենեակը օգնէ ձեզի ձեր գանգատը արձանագրելու գործողութեան, գանգատները պէտք է ներկայացնէք 6 ամսուայ ընթացքին, կատարուած խախտումէն ետք: Ստանալէ ետք ձեր գանգատը, Դպրոցական Շրջանը վաթսուս (60) օր ունի հետախուզելու և լուծելու համար գանկիւ, բացի եթէ, համաձայն գտնուիք ժամանակի երկարաձգումին:

Եթե համաձայն չէ՛ք ձեր գանգատի լուծման արդյունքին, կրնա՛ք առևուճ որոշումին համար վերատեսուծիքն պահանջել Քալիֆորնիոյ Կրթական Նախարարութեան մօտ, Դպրոցական Շրջանի գրաւոր որոշումը ստանալէն ետք, տասնընից (15) օրուայ ընթացքին, կամ՝ լուծել քաղաքային օրէնքի միջոցով: Եթէ գանգատը պարունակէ անկարողութեան հետ աւընջութիւն ունեցող խտրականական հարց, այդ պարագային կարելի է վերաքննութիւն պահանջել District Educational Equity Compliance Office-ի մօտ: Բոլոր վերատեսուծիքները պէտք է բովանդակեն բնագրի և Դպրոցական Շրջանի առած որոշումի կրկնօրինակները:

## **Նահանգային Գանգատներ**

Փոխանակ տեղական գանգատի, կրնա՛ք ուղղակի գանգատ ներկայացնել Քալիֆորնիոյ Կրթական Նախարարութեան (CDE)- մօտ: CDE- պիտի միջամտէ եթէ ձեր գանգատը հաստատէ թէ.

- Խախտում կայ Դաշնակցային օրէնքի յատուկ կրթութեան գործադրութեան մէջ:
- Ձեր երեխան ծառայութիւններ չ'ստանար, ինչպէս որ սահմանուած է Անհատականացուած Կրթութեան Մրագրին մէջ (IEP):
- Ձեր երեխան կամ խումբ մը երեխաներ անմիջական վտանգի տակ են, կամ անոնց առողջութիւնը, անվտանգութիւնը ու ապահովութիւնը վտանգուած է:
- Դպրոցական Շրջանը կը զլանայ կամ կը մերժէ ենթարկուիլ Դաշնակցային կամ Նահանգային սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան (due process hearing) գործելակերպերուն, կամ կիրարկել սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան (due process hearing) հրահանգը:
- Դպրոցական Շրջանը դուրս, հանրային ընկերութիւն մը, կը զլանայ կամ կը մերժէ ենթարկուիլ յատուկ կրթութեան ծառայութիւններու մատուցման վերաբերեալ օրէնքին կամ կանոնագրութեան:
- Դպրոցական Շրջանը զլացած է հետեւելու տեղական գանգատի գործելակերպերուն:

Կրնա՛ք ձեր գրաւոր և ստորագրուած գանգատը դրկել հետեւեալ հասցէին.

Procedural Safeguards Referral Service  
Special Education Division  
California Department of Education  
1430 N. Street, Suite 2401  
Sacramento, CA 95814

Երբ ձեր գանգատը ստանան, CDE- ին պիտի հետազօտէ գանգատը և գրաւոր կերպով պիտի պատասխանէ ձեզի, վաթսուն (60) օրուայ մէջ, եթէ պարագաներու բերումով չ'ներկարագուի:

Ձեր գանգատի լուծման երեսուն (30) օրերու ժամանակամիջոցին, CDE- ին կապի մէջ պիտի մտնէ ձեզի հետ, հաստատելու համար ձեր գանգատի յաջող ելքը:

Եթէ դժգոհ ըլլա՛ք անկէ, կրնա՛ք դիմել Մ. Ն. Կրթական Նախարարութեան:

Եթէ պէտք ունի՛ք յաւելեալ տեղեկութեան գանգատ մը բանաձեւելու համար CDE- ի մօտ, կրնա՛ք հեռաձայնել Quality Assurance Unit- ին (800) 926-0648 թիւին:

**Ձեր ներխուժող Իրավունք Ունի Պաշտպանություն Խտրականության (Discrimination) և Անհանգստացումներու (Harassment) Դեմ**

Լուս Անճեյուսի Միացեալ Դպրոցական Շրջանը յանձնառու է հայթայթելու աշխատանքային եւ ուսումնական միջավայր մը, որ գերծ է խտրականութենէ և անհանգստացումներէ՝ անհատի սեռի, սեռային հակումի, ցեղային պատկանելիութեան, նախահայրերու ծագման, ազգային ծագումին, կրօնին, գոյնին կամ մտային կամ ֆիզիքական անկարողութեան, կամ որեւէ այլ Դաշնակցային, Նահանգային, տեղական օրէնքի, ծէսի, կամ կարգ ու կանոնի հիմունքներէ: Անհանգստացումները՝ համաձայն Title IX (ինչ կը վերաբերի սեռի), Title VI (ինչ կը վերաբերի ցեղի, գոյնի, կամ ազգային ծագման), և (Section 504) Հատուածի և Title II Անկարողութիւններ ունեցող ամերիկացիներու Հրամանագրին՝ (ինչ կը վերաբերի մտային կամ ֆիզիքական անկարողութեան). խտրականութեան անօրէն ձև մըն է, որ բոյլարուած չէ նահանգի կողմէ: Անհանգստացուցիչ վարվելակերպը բազմաթիւ ձևերով կը դրսեւորուի. ներառեալ բերանացի ակնարկութիւններ, գծագրական կամ գրաւոր յայտարարութիւնները, կամ վարվելակերպ մը, որ ֆիզիքական վախ կը պատճառէ կամ նուաստացուցիչ է:

Անխտրականութեան այս ֆաղափակումները կը պարունակէ ընդունումը կամ մտչելիութիւնը, կամ վերաբերումը կամ աշխատանքի մասնակցութիւնը, Ուսումնական Շրջանի ծրագիրներուն և գործունէութիւններուն, ներառեալ մասնագիտական կրթութեան: Անգլխբէն լեզուի տիրապետման պակասը չի կրնար արգելիչ ըլլալ Շրջանի ծրագիրներներու մասնակցութեան:

Անօրինական խտրականութեան/անհանգստացումներու այլ կերպերու, անպատշաճ վերաբերմունքներու, և/կամ ատելութեան կատարուած ռիզիկներու մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել Ուսումնական Շրջանի ֆաղափակումներու վերաբերող կանոնագրքերու մէջ, որոնք տրամադրելի են բոլոր պարոցներուն և գրասենեակներու կողմէ: Կրթական ծառայութիւններու ու պատեհութիւններու հայթայթումը անօրէն խտրականութենէ լաւագոյն պահպանելու համար, Դպրոցական Շրջանը նպատակադրած է տեսական կարգով այս կանոնագրութիւնները:

Դպրոցներու և գրասենեակներու մէջ անօրէն խտրականութեան/անհանգստացումի, անպատկար վերաբերմունքի, և/կամ գզուելի ռիզիկներու մասին կը մատուցուին յաւելեալ տեղեկութիւններ: Դպրոցական Շրջանի դիտարարութիւնն է, որ նման տեսակի կանոնագրութիւններ միշտ կարգացուին որպէսզի ուսումնական ծառայութիւններու ու պատեհութիւններու մատակարարումը գերծ մնայ անօրինական խտրականութենէ:

Բոլոր պաշտօնեաները պէտք է գոյշ ըլլան իրենց պաշտօնավարութեան ընթացքին բառերու գործածութեան, կեցումներին, արարքին և ընթացքին, ապահովելու համար բոլոր ուսանողներուն հանդէպ հաւասար մօտեցում և վերաբերմունք: Որևէ ձևի խտրականութիւն/անհանգստացում ուսանողներու հանդէպ, իրենց ունեցած անկարողութիւններուն համար, անընդունելի և անբարոյական է, և պիտի չբոյլարուի: Այս կանոնագրութեան որեւէ խախտում պիտի հետագոտուի և ենթակայ դառնայ կարգապահական միջոցառումի:

Դպրոցական Շրջանի բոլոր բաժանմունքները, գրասենեակները, և մասնահիւղերը ունին որոշ պատասխանատուութիւններ գործադրութեան դէմը: Կամ այս կանոնագրութիւնը, որովհետեւ տնօրինուած է Կրթական Խորհուրդի և Վերատեսուչի կողմէ:

Գործադիր անձնակազմը, պատասխանատուները, բոլոր բաժանմունքները, տեղական դպրոցական շրջանները և տեղական դպրոցավայրի պատասխանատուները հաշուետու պիտի ըլլան այս կանոնագրութեան գործադրութեան:

Դպրոցական շրջանը կ'արգիլէ վրէժխնդիր վերաբերմունք ունենալ որեւէ անձի դէմ, որ գանգատ կը ներկայացնէ կամ կը մասնակցի գանգատի հետագոտութեան: Այս Դպրոցական Շրջանի անխտրականութեան ֆաղափակումներու վերաբերեալ որեւէ հարցարարում և կամ խտրականութեան/անհանգստացումներու դէմ գանգատը կարելի է ուղղել հետեւեալ հասցէին.

Անկարողութեան հիմք ունեցող անհանգստացումները սպառնալիք են, կամ անկարողութիւններ ունեցող ուսանողի հանդէպ չարաշահութիւն՝ որոնք կը ստեղծեն թշնամական ու անարգական միջավայր: Անոնք արգելի կը հանդիսանան կամ կը մերժեն ուսանողին մասնակցութիւնը կամ շահերը Դպրոցական Շրջանի ծրագիրներուն կամ գործունէութիւններուն: Անհանգստացուցիչ (Harassing) վարուելակերպը, շատ մը ձեւերով, կը դրսեւորուի, ինչպէս բանաւոր դիրքորոշումներ և անուանարկումներ, նաեւ, ոչ բանաւոր վերաբերմունք, ինչպէս, գծագրութիւններ և գրաւոր յայտարարութիւններ, կամ վարուելակերպ, որոնք ֆիզիքապէս վախ կը պատճառեն, և որոնք վնասակար կամ նսեմացուցիչ են: Որպէսզի որոշում մը անօրինական խտրականութիւն նկատուի, վարուելակերպը պէտք է ըլլայ անընդունելի, խտտաբարոյ կամ հետեւողական, և անորամաքանականօրէն խանգարէ անհատի մը կրթական կամ աշխատանքային միջավայրը, կամ ստեղծէ թշնամական կրթական կամ աշխատանքային միջավայր:

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՐԱՑԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՌԱՆՑ ԳՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՑԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՊՐՈՑԷ ՆԵՐՍ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Դպրոցական Շրջանը պարտաւոր չէ վնասել անձնական դպրոցի կրթութիւնը, ներառեալ յատուկ կրթութեան ծառայութիւնները, անկարողութիւններ ունեցող ուսանողի մը, եթէ Դպրոցական Շրջանը իր դպրոցներուն մէջ տրամադրէ երեխայի համար յատուկ ծառայութիւններ, և դուք նախընտրէ՞ գինք գետեղել անձնական դպրոց, կամ հաստատութիւն:

Եթէ ձեր երեխան նախապէս ստացած էր յատուկ կրթութեան ծառայութիւններ Դպրոցական Շրջանի պատկանող դպրոցին մէջ, և դուք այժմ գինք կ'արձանագրէ՞ք անձնական դպրոց մը առանց Դպրոցական Շրջանի հաւանութեան կամ յանձնարարականին: Դատարանը կամ արդար դատավարութեան պաշտօնեան կրնայ պահանջել, որ Դպրոցական Շրջանը վնասէ ձեր զինքն անձնական դպրոցի տեղադրման ծախսը, եթէ Դպրոցական Շրջանը ատենին մատուցած չըլլայ երեխային յատուկ կրթութեան յարմար ծառայութիւններ՝ նախքան երեխայի անձնական դպրոց արձանագրութիւնը:

Կրնան գեղջել կամ մերժել վնասումը եթէ ծանուցագիր մը յանձնած չէ՞ք Դպրոցական Շրջանին, թէ.

- կը մերժէք Դպրոցական Շրջանի տեղադրումը,
- կը յայտնէք ձեր մտահոգութիւնները տեղադրումի մասին, և
- նպատակ ունիք ձեր երեխան արձանագրելու անձնական դպրոց և նիւթական հատուցում պահանջելու Դպրոցական Շրջանէն:

Դուք պէտք է այս ծանուցագիրը յանձնէք (IEP)-ի խումբին, Անհատականացուած Կրթութեան Ծրագրի ժողովին, կամ գրաւոր ծանուցագիր մը դրկէք Դպրոցական Շրջանին նախքան ձեր երեխան հանրային դպրոցէն հանելը աշխատանքային տաւր (10) օրեր առաջ:

Վճարումը կրճան պակսեցնել կամ մերժել, եթե նախան ձեռք բերված անճանկան դպրոց տեղադրելը, Դպրոցական Շրջանը պատշան ձեռով յայտնած ըլլայ երեխային ծնողքին, թէ երեխան գնահատելու նպատակ ունի, բայց ծնողները ընթացք տուած չ'ըլլան: Դատարանը կրճայ նաև պակսեցնել կամ մերժել վճարումը եթէ գտնէ, թէ տրամաբանական չէ ծնողքին ընթացքը:

Վճարումը պիտի չի գեղչուի կամ մերժուի եթէ ձեռ անգրագիտութեան կամ անգլեբրէնով չի կարենալ գրելուն պատճառաւ չէ՛ք հայթայթած ծանուցագիրը, և կամ տրուած ծանուցագիրը ֆիզիքական կամ լուրջ զգացական վնաս կրճար պատճառով ձեռ երեխային, կամ դպրոցը զգուշացուցած էր ձեզի ծանուցագիր հայթայթելէ:

## **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Անկարողութիւն ունեցող ուսանողներէն կ'ակնկալենք, որ հետեւին Դպրոցական Շրջանի Մտող և Ուսանող Ձեռագրքին մէջ մասնաորուած վարքի կանոններուն: Դուք պէտք է ձեռ երեխային հետ միասին կարդաք վարքի կանոնները, որպէսզի ան գիտնայ դպրոցի ակնկալութիւնը: Եթէ ձեռ երեխան վերաբերմունքային հարցեր ունի դպրոցը, կամ դուք, և կամ դպրոցը, IEP - ի խումբի ժողով մը պահանջելու էք, քննելու համար յարմարագոյն ցուցմունքները, վարքագծի գործադրութեան կերպերը, և վարքագծի օգնութիւնները, որոնք կը նպաստեն ձեռ երեխայի վարքագծի բարելաւումին: Եթէ լուրջ է իր վերաբերմունքային ընթացքը, կամ դուք, կամ դպրոցը, կրճաք պահանջել վերաբերմունքի գնահատութիւն մը: Վերաբերմունքի գնահատութեան արդիւնքները կարելի է օգտագործել զարգացնելու կամ փոփոխութեան ենթարկելու համար Վերաբերմունքի Սատարող Մրագիրը, և կամ Վերաբերմունքի Նպաստող Մրագիրը:

Անկարողութիւն ունեցող երեխայ մը, որ կը խախտէ ուսանողական կանոնագիրը, դպրոցի անճանկազմը կրճայ այդ ուսանողին իր ներկայ տեղադրումէն հանել և գետեղել ժամանակաւոր կերպով աւելի յարմար փոխարինող կրթական միջավայր, ուրիշ միջավայր, կամ կախակայել 10 դպրոցական օրեր, ոչ աւելի: Եթէ դպրոցի անճանկազմը յանճարարէ տեղադրումի փոփոխութիւն մը (դադրեցում կամ արտախում) 10 օրէ աւելի, IEP-ի ժողով մը պիտի գումարուի անմիջապէս, դպրոցական 10 օրուայ ընթացքին, ոչ աւելի ուշ, որոշելու համար եթէ դպրոցի կանոնագրութիւնը խախտող վերաբերմունքը արդիւնք է երեխային անկարողութեան: Համաճայն IDEA-ի երեխայի մը վարուելակերպը անոր անկարողութեան բացայայտութիւնն է. եթէ. 1- վարուելակերպը հետեւանք է եւ անմիջականօրէն կապ ունի երեխային անկարողութեան հետ. կամ 2- վարուելակերպը անմիջական արդիւնքն է Դպրոցական Շրջանի երեխային (IEP) Անհատականացուած Կրթութեան Մրագիրը չի կիրարկելուն:

Եթէ IEP-ի խումբը որոշէ որ այդ վերաբերմունքը երեխային անկարողութեան հետեւանքն չէ, այդ պարագային դպրոցը կը դաստիարակէ ուսանողը նոյն ձեռով, որ կը դաստիարակէ այն ուսանողները, որոնք անկարողութիւններ չունին: Եթէ դաստիարակութիւնը ընդգրկէ տեղադրումի փոփոխութիւն, նոր տեղադրումը պիտի որոշուի IEP-ի խումբին կողմէ: Նոր տեղադրումը երեխան պիտի շարունակէ կրթական ծառայութիւններ ստանալ եւ շարունակէ ընդհանուր կրթութեան ուսումնական ծրագրին հետեւիլ որպէսզի լրացնէ իր (IEP) Անհատականացուած Կրթութեան Մրագրի նպատակակէտերը: Նաեւ երեխան պիտի ստանայ վերաբերմունքի կիրարման գնահատութիւն, եւ վերաբերմունքին նպաստող ծառայութիւններ ու փոփոխութիւններ, որպէսզի խճորոյ առարկայ վարուելակերպը դարճեալ չի կրկնուի:

Եթէ IEP-ի խումբը գտնէ, թէ այդ վերաբերմունքը հետեւանքն է երեխային անկարողութեան, երեխան պիտի վերադառնայ իր նախկին տեղադրումը, նախկին կարգապահական միջոցառումը,

բացի եթէ Դպրոցական Շրջանը և ծնողները համաձայն գտնուին տեղադրումի փոփոխութեան, կամ՝ Դպրոցական Շրջանը IAES դուրս դրած ըլլալ ուսանողը զենք կրելու, թմրեցուցիչներ կամ մարմնական լուրջ վնասներ պատճառելու իր ընթացքին համար: Առաւել ևս, Դպրոցական Շրջանը պիտի կատարէ ընթացքի մէջ գտնուող վերաբերմունքին գնահատութիւն մը եթէ նախապէս կատարուած չէ, և մշակէ Վերաբերմունքի Նպաստող Ծրագիրը մը: Եթէ վերաբերմունքի նպաստող ծրագիրը մը մշակուած էր արդէն իսկ, IEP-ի խումբը պիտի վերաբերմունքը վերաբերմունքի և բարեփոխել, ըստ անհրաժեշտութեան, ուղղելու համար վերաբերմունքը:

Դպրոցի անձնակազմը կրնայ հանել ուսանողը և գետեղել ժամանակաւոր փոխընտրական կրթական միջավայր մը, ոչ աւելի քան 45 դպրոցական օր առանց որոշելու եթէ երեխայի վերաբերմունքը հետեւանքն է երեխային անկարողութեան, այն պարագաներուն, որ երեխայի մը վրայ կամ մօտը զենք գտնուի, թմրեցուցիչներ ունենայ, վաճառէ կամ վաճառման միջնորդ է ոգեւիչց նիւթերու, կամ ուրիշներուն լուրջ մարմնական վնասներ պատճառէ դպրոցէն ներս, դպրոցական վայրերու մէջ, կամ դպրոցական միջոցառումներու ընթացքին: Նման պարագաներուն, IAES -ը պիտի որոշուի երեխայի IEP-ի խումբին կողմէ: Եթէ վերաբերմունքը կապ չունի զենքի, թմրեցուցիչներու կամ մարմնական լուրջ վնասի հետ, դպրոցական Շրջանը կրնայ ունկնդրութիւն պահանջել եթէ կը հաւատայ, թէ ներկայ տեղադրման մէջ պահելը վնաս կը պատճառէ երեխային կամ ուրիշներուն: Նման ունկնդրութեան որոշում մը կարենալ առնելու համար, ունկնդրութեան պատասխանատուն կրնայ պահանջել տեղադրման փոփոխութիւն, յարմար IAES մը ոչ աւելի քան 45 դպրոցական օրեր:

Եթէ համաձայն չէ 1- կարգապահական միջոցառումի հետեւանքով կատարուած որևէ տեղադրումի, կամ 2- վնիոնի՝ կրնաք արագընթաց սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութիւն պահանջել վերաբերմունքի համար որոշումը կամ վնիոնը: Արագընթաց ունկնդրութիւնները աւելի նուազ ժամանակամիջոց կը պահանջեն քան ոչ-արագընթաց սահմանադրական իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի ունկնդրութեան գործելակերպերը: Արագընթաց ունկնդրութիւն վարելու ժամանակամիջոցի տեւողութիւնը դպրոցական 20 օր է. ունկնդրութեան խնդրանք ներկայացնելէ ետք ունկնդրութեան պաշտօնեան լսելէ ետք ունկնդրութիւնը պէտք է որոշում կայացնէ դպրոցական 10 օրուայ ընթացքին: Արագընթաց ունկնդրութեան ընթացքին, ձեռք երեխան պիտի մնայ IAES մէջ, բացի եթէ դուր և Դպրոցական Շրջանը այլ համաձայնութիւն ունենալ: IAES մէջ գտնուած շրջանին երեխան պիտի շարունակէ կրթական ծառայութիւններ ստանալ եւ շարունակէ ընդհանուր կրթութեան ուսումնական ծրագրին հետեւիլ եւ յառաջանալ որպէսզի լրացնէ իր (IEP) Անհատականացուած Կրթութեան Ծրագրի նպատակակէտերը:

***Պաշտպանութիւն Այն Երեխաներուն համար, Որոնք Տակաւին Ընդունուած չեն Յատուկ Կրթութեան եւ Յարակից Ծառայութիւններու***

Եթէ երեխայ մը, որ տակաւին որոշուած չէ, թէ յատուկ կրթութիւն եւ յարակից ծառայութիւններ ստանայ, խախտէ ուսանողական վարձագծի կանոնները, սակայն եւ այնպէս Դպրոցական Շրջանը տեղեկ էր, որ երեխան անկարողութիւն ունի նախքան վարձագծի դրսեւորումը, երեխան վերը նկարագրուած յատուկ կրթութեան պաշտպանութեան իրաւունքները ունի: Կենթադրեմք որ Դպրոցական Շրջանը տեղեկ էր որ երեխան անկարողութիւն ունի եթէ նախքան վերաբերմունքի պատահարը.

1. Ծնողը գրաւոր կերպով իր մտաւորութիւնը յայտնած էր, Դպրոցական Շրջանի Վարչական կազմին կամ երեխայի ուսուցիչին, թէ երեխան յատուկ կրթութեան եւ յարակից ծառայութիւններու կը կարօտի:

2. Ծնողը յատուկ կրթութեան գնահատութիւն պահանջած էր.
3. Երեխային ուսուցիչը կամ Դպրոցական Շրջանի պատասխանատուն նկատելով երեխային վարուելակերպի օրինակները, մտահոգութիւն յայտնած էր վարիչ պատասխանատուներուն:

Դպրոցական Շրջանը պատասխանատու պիտի չի նկատուի, եթէ երեխային ծնողը արտօնութիւն տուած չեն որ երեխան գնահատուի կամ մերժած են յատուկ կրթութեան ծառայութիւնները: Նոյնպէս Դպրոցական Շրջանը պատասխանատու չէ, եթէ երեխան գնահատուած է եւ ընդունուած չէ յատուկ կրթութեան եւ յառակից ծառայութիւններ ստանալու կամ եթէ ծնողը ջնջել է հաւանութիւնը Յատուկ կրթութեան Ծառայութիւններու և դրա կապված Ծառայութիւնների շարունակական գործընթացը: Նմանօրինակ պարագաներուն Դպրոցական Շրջանը կը դաստիարակէ այնպէս ինչպէս կը դաստիարակէ անկարողութիւն չ'ունեցող երեխաները:

Եթէ գնահատութեան պահանջքը ներկայանայ երեխային դաստիարակութեան ժամանակ, Դպրոցական Շրջանը գնահատութիւնը պիտի կատարէ արագընթաց կերպով: Մինչեւ որ գնահատութիւնը չ'աւարտի, երեխան պիտի մնայ իշխանութիւններու կողմէ որոշուած կրթական տեղադրման մէջ, որ կ'ընդգրկէ կախակայում կամ վտարում: Եթէ երեխան IDEA-ի համաձայն ընդունուի, Դպրոցական Շրջանը պէտք է հայթայթէ յատուկ կրթութիւն եւ յարակից ծառայութիւններ եւ ենթարկուի այս ուղեգրին մէջ նշուած օրինական ապահովութեան միջոցներուն-ընթացքին:

### ***ՈՆԻՈՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ***

IDEA-ը չ'արգիլէր, որ Դպրոցական Շրջանը կամ անոր անձնակազմը իշխանութիւններուն տեղեկացնէ անկարողութիւն ունեցող երեխայի մը գործած ոճիւրը, ոչ ալ արգելք կ'ըլլայ ուսիականներուն եւ դատական իշխանութիւններուն, որ անոնք կիրարկեն իրենց պարտականութիւնները ըստ օրէնքի: Եթէ դպրոցական Շրջանը տեղեկացնէ անկարողութիւն ունեցող երեխայի մը գործած ոճիւրը, ապա ուրեմն Դպրոցական Շրջանը պէտք է ապահովէ, որ յատուկ կրթութեան եւ կարգապահական տեղեկագրութեան կրկնօրինակները համապատասխան իշխանութիւններուն փոխանձէ վերատեսութեան համար:

## **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

Երեխայի իրաւունքները պաշտպանելու համար, Դպրոցական Շրջանը պէտք է որոշում կայացնէ եթէ ան պէտք ունի փոխարինող ծնողի մը, և եթէ յարմար նկատէ, նշանակէ փոխարինող ծնող մը հետեւեալ պարագաներուն. եթէ

- Ծնող կամ խնամակալ չունի,
- Դպրոցական Շրջանը, որոշ ջանքերէ ետք, չի կարենայ գտնել ծնողը կամ խնամակալը,
- Երեխան նահանգի խնամակալութեան տակ է:

- Դատարանը յատկապես սահմանափակած է ծնողին կամ խնամակալի կրթական որոշումներ առնելու իրաւունքը:
- Պատանին կամ պատանուհին անտուն է եւ ֆիզիքապես ծնողին կամ խնամակալի հսկողութեան տակ չի գտնուիր:

Դպրոցական Շրջանը պէտք է վստահեցնէ, թէ ընտրուած փոխարինող ծնողին շահերը հակառակ չեն իր ներկայացուցած երեխայի շահերուն: Նաև, լաւապէս ներկայացնելու համար երեխան՝ ընտրուած անձը պէտք է իրազէկ և հմուտ ըլլայ:

Փոխարինող ծնողը պէտք է որ պաշտօնավարէ Դպրոցական Շրջանէ ներս: Անձ մը Դպրոցական Շրջանի պաշտօնեան չի դառնար միայն, որովհետեւ կը վնարուի Դպրոցական Շրջանի կողմէ ծառայելու համար իբրև փոխարինող ծնող:

Փոխարինող ծնողը կրնայ ներկայացնել երեխան այն հարցերուն մէջ, որոնք կապ ունին բնորոշման, գնահատութեան, ուսումնական ծրագրման և մշակման, IEP -ի վերանայումի և վերաբնութեան, և այլ նիւթերու հետ, որոնք կապ ունին երեխայի կրթական ծառայութիւններուն հետ: Փոխարինող ծնողը կրնայ ստորագրել որևէ համաձայնութիւն, որ կապ ունի յատուկ կրթութեան գործընթացին և առաջադրանքներուն հետ:

Փոխարինող ծնողը Քալիֆորնիոյ Նահանգի պաշտպանութենէ պիտի գրկուի երբ պաշտօնական աշխատանքին մէջ անարդարանալի, անպատասխանատու և վատաբարոյ ընթացքներու կամ տրուած ցուցմունքներու դէմ անպատասխանատու վերաբերմունքներու մէջ գտնուի:

## ՅԱՃԱԽԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

<b>APE 5</b>	Յարմարեցուած Ֆիզիքական Կրթութիւն
<b>ASL</b>	Ամերիկեան Խուլերու և Համերու Լեզու
<b>AT</b>	Օգտաշատ Գիտարուեստ
<b>BIP</b>	Վերաբերմունքի Նպաստող Ծրագիր
<b>BSP</b>	Վերաբերմունքի Օժանդակող Ծրագիր
<b>CAC</b>	Համայնքի Խորհրդատու Վարչութիւն
<b>CDE</b>	Քալիֆորնիոյ Կրթական Նախարարութիւն
<b>DIS</b>	Նշանակուած Ուսուցում և Ծառայութիւններ
<b>ESY</b>	Երկարաձգուած Դպրոցական Տարեշրջան
<b>FAA</b>	Գործի Վերլուծման Գնահատութիւն
<b>FAPE</b>	Անվնար Հանրային Կրթութիւն
<b>504</b>	Յատուած 504 1973-ի Վերականգնումի Հրամանագիր
<b>IDEA</b>	Անկարողութիւն Ունեցող Անհատներու Կրթութեան Հրամանագիր
<b>IEE</b>	Անկախ Կրթական Գնահատութիւն
<b>IEP</b>	Անհատականացուած Կրթութեան Ծրագիր
<b>ITP</b>	Անհատական Փոխանցման Ծրագիր
<b>LAUSD</b>	Լոս Անճելոսի Միացեալ Դպրոցական Շրջան
<b>LRE</b>	Նուազագոյն Տարբերութեամբ Զատորոշուող Միջավայր
<b>LEP</b>	Սահմանափակ Անգլերէնի Հմտութիւն
<b>NPA</b>	Ոչ-Հանրային Հաստատութիւն
<b>NPS</b>	Ոչ-Հանրային Դպրոց
<b>OCR</b>	Գրասենեակ Քաղաքացիական Իրաւունքներու
<b>OT</b>	Մասնագիտական Դարմանում
<b>PT</b>	Ֆիզիքական Դարմանում
<b>RSP</b>	Յատուկ Կրթութեան Ուսուցման Մասնագէտ
<b>SDP</b>	Յատուկ Օրուայ Ծրագիր
<b>SST</b>	Ուսանողի Յաջողութեան Օժանդակող Խմբակ

## Այս Ուղեգիրքը տրամադրելի է

Հայերեն	Չինարեն
Անգլերեն	Քորիերեն
Ռուսերեն	Սպաներեն
Վիեթնամերեն	

## Ասոնց վերաբերեալ գրեռյկներ տրամադրելի են Ձեր Տեղական Դպրոցներու մէջ:

- *Շփոթութեան Մատուցած էք Ձեր Երեխային Յատուկ Պէտքերուն համար:*
- *Անհատականացուած Կրթութեան Ծրագիրը (IEP) և Դուք*
- *Անհատականացուած կրթութեան Ծրագրի Անհամաձայնութիւններու Անպաշտօն Վէճի Լուծում*
- *ITP և Դուք*
- *Նուազագոյն Տարբերութեամբ Զատորոշուող Միջավայր (LRE)*
- *Յատուած 504 և Անկարողութիւններ ունեցող Ուսանողներ*
- *Գանգատի Պատասխանող Միաւոր/Ծնողական Տեղեկութեանց Ցանց*
- *Կանոնաւոր Գանգատի Գործելակերպեր*

## Այլ Տեղեկութեան Միջոցներ

Եթէ կը փափաքիք յաւելեալ տեղեկութիւններ ունենալ Յատուկ Կրթութեան մասին կամ հարցումներ ունիք, ձեր երեխայի կրթութեան առընչութեամբ, կրնաք դիմել հետեւեալներուն.

- Ձեր երեխային ուսուցիչին
- Ձեր երեխային դպրոցի տնօրէնին
- Ձեր Յատուկ Կրթութեան Օգնութեան Կազմի Ղեկավարին

**Հիւսիսային Օգնութեան Կազմին 1 և 2 Տեղական Դպրոցական Շրջաններու համար**  
(818) 256-2800

**Կեդրոնական/Արեւմտեան Օգնութեան Կազմին 3 և 7 Տեղական Դպրոցական Շրջաններու համար**  
(323) 421- 2950

**Արեւելեան Օգնութեան Կազմին 4 և 5 Տեղական Դպրոցական Շրջաններու համար**  
(323) 932 -2155

**Հարաւային Օգնութեան Կազմին 6 և 8 Տեղական Դպրոցական Շրջաններու համար**  
(310) 354-3431

